Փոխակերպման ուղիներ

հայ քվիր պատմություններ

Փոխակերպման ուղիներ

հայ քվիր պատմություններ

Այս գիրքը պատրաստվել է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից՝ Եվրոպայի խորհրդի Եվրոպական երիտասարդական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Սույնում արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի և «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության պաշտոնական դիրքորոշումը:

Այս գիրքը պարունակում է զգայուն նյութեր, ներառյալ, բայց չսահմանափակվելով բռնության, չարաշահումների, տրավմայի, հոգեկան հիվանդությունների և այլ թեմաներով, որոնք կարող են անհանգստացնել որոշ ընթերցողներին: Խորհուրդ է տրվում սա հաշվի առնել ընթերցելուց առաջ:

Քելլի Հովհաննիսյան
.....3
Ռաֆ Դանիելյան
.....9
Սևակ (Լուսաբեր) Կիրակոսյան
.....15
Աննա Էվոյան
.....25
Տէգրան Հովհաննիսյան
.....31
Էգի Էֆես
.....39
Նարեկ Առուշանյան
.....47
Անյա Եգանյան
.....52
Շին
.....58
Հենրի
.....62
Մաքս Գասպարյան
.....68
Լիլիթ Աթաբեկյան
.....72

Չափազանց գեյ՝ գեյ լինելու համար
Քելլի Հովհաննիսյան

Born amongst bullies, in a land of fear,
Safe haven elusive, community unclear.
Emotions unexpressed floating in the sea,
Yellow waves crash, yearning to be free.

In a world divided, colors defined,
I'm neither blue nor pink, a hue entwined.
Yellow is my heart, nuanced yet sublime,
Expectations clash, yet I bloom in time.

Survival's masquerade in a place called home,
Masculinity performed, a facade to disown.
A miserable act, a scripted role,
Longing for freedom that would make me whole.

Kelly, my refuge, a name self-bestowed,
In its colorful echoes, my identity flowed.
Persistent deadnaming whispers still resist,
A painful reminder of a past dismissed.

With every colorful outfit that I wear,
With every utterance of Kelly in the air,
I declare my humanity, a vivid decree,
A human experience for those who can see.

Romantic hurdles, bruising my heart,
"Too feminine for my liking", that's when I depart,
Labeled "too gay" by the gays themselves,
Community unclear, we divide ourselves

Արդյոք մարդիկ ծնվում են գեյ, թե դառնում ավելի ուշ՝ գիտնականների շրջանում հակասական թեմա է: Թո՛ղ շարունակեն վիճել: Ես գիտեմ իմ պատմությունը: Ես եմ իմ կյանքի ընթացքը շարադրում:

«Մամ, էս արջուկը իմ ամուսինն է:»
- 3 տարեկան Քելլի

Ողջույն, ես Քելլին եմ, 21 տարեկան տղա, ով մարդուն հատուկ կենսափորձ է վարում: Ես հենց նոր հասկացա, որ 3 տարեկանում եմ մայրիկիս պատմել իմ կողմնորոշվածության մասին: Նաև հիշեցի, որ մազեր հիշեցնող ինչ-որ իրեր էի հագնում և սկսում ելույթ ունենալ մեր հյուրերի համար: Ես ի ծնե եմ գեյ: Ուշագրավ է, որ յուրաքանչյուր մարդ արդեն իսկ ունի իմ անձի մասին որևէ պատկերացում իր գլխում: Միգուցե դու ինձ արդեն հանդիպել ես: Միգուցե գաղափար չունես, թե ով եմ, բայց նախորդ էջում նկարս տեսնելով հասցրել ես որոշ ակնկալիքներ և պատկերացումներ կազմել իմ գոյի վերաբերյալ: Ակնկալիքները պոտենցիալ հիասթափություններ են: Սկսած մորս արգանդում ձևավորվելու պահից, իմ գոյի վրա, անկախ իմ կամքից, ակնկալիքներ և պատկերացումներ են փաթաթվել: Ծնողներս մինչ ծնվելս արդեն պատկերացում ունեին, թե ինչպիսի երեխա կլինեի: Արդեն գնել էին կապույտ, տղային հատուկ շորեր, ընտրել արական անուն,

միգուցե նաև մշակել ինձ դաստիարակելու որոշ մեխանիզմներ: Իհարկե, փոքր տարիքում դեռ չէի հասկանում գեյ լինելու կոնցեպտը, ոչ էլ բավարար բառապաշար ունեի այն բացատրելու համար, այդ իսկ պատճառով մեծացել եմ մտածելով, թե իմ եսի հետ ինչ-որ բան այն չէ: Քվիր մարդկանց առաջին օրինակները տեսել եմ հեռուստացույցով, որոնք խեղաթյուրված, սխալ և կարծրատիպային մոտեցմամբ պատկերված գեյ տղամարդկանց բացասական կերպարներ էին: Լսելով ծնողներիս խոսակցությունները քվիր անձանց շուրջ՝ սկսել էի ինքս ինձանից նողկալ: Մի՞ թե ես էի այն հոգեկան խնդիրներ ունեցող անձը, ում մասին խոսում էին ծնողներս: Միթե՞ ես էի այն անմարդկայնացված, մարդկային լինելիությունից շեղված, դեմոնիզացված անձը, ում հարկավոր էր ողջ-ողջ այրել Երևանի կենտրոնում:

Շատ վաղ տարիքից կորցրել էի ապահովության զգացումը: Ապահով չէի զգում տանը, ծնողներիս հետ: Ապահով չէի զգում և ոչ մի տեղ: Նրանք էին այն մարդիկ, ումից ես ինձ պաշտպանելու, ապահով տարածքս լինելու ակնկալիքներ ունեի 6 տարեկանում:
Ակնկալիքներս բախվեցին դառը իրականության հետ: Մեծացա, առանց ապահով տարածքի՝ առանց համայնքի...

Դպրոցում գիտեին, որ գեյ եմ մինչ ես կիմանայի, թե գեյ լինել ինչ է նշանակում: Խտրականության էի ենթարկվում շարունակ: Ամեն օր գնում էի դպրոց, կարծես գնում եմ ռազմաճակատ: Մինչդեռ տանը ջանում էի համապատասխանել այն ակնկալիքներին, որոնք ծնողներս ունեին իմ անձի վերաբերյալ: Գոյատևման դիմակ, պարիսպներով շրջապատված ինքնություն, արդեն իսկ գրված սցենար, որը պետք է խաղայի սիրված լինելու համար: Իմ իսկական եսը ահագնացող վտանգ էր իմ սիրված լինելու հնարավորության համար: Եթե ցանկանում էի լինել սիրված, պետք էի արդարացնեի այն ակնկալիքները, որոնք ծառացել էին գոյիս շուրջ: Սկսեցի վնասել ինքս ինձ: Դա էլ հաղթահարեցի: Թեև արդեն գոյաբանական խնդիրներ ունեի: Մարդիկ սովորաբար գոյաբանական խնդիրներ են ունենում 40 տարեկանում, իմ դեպքում դա սկսվեց 13-ում: Հաճախ ԼԳԲՏԻՔ անձինք ստիպված են մեծանալ ժամանակից շուտ, որպեսզի կարողանան հաղթահարել այն հոգեկան, ֆիզիկական և գոյաբանական ցավը, որը առաջանում է ընտանիքի, հասարակության և ընկերների մերժումից, սիրո և ընդունելության բացակայությունից և խտրականությունից: Երբ 11 տարեկան էի, հեռուստացույցով տեսա Կոնչիտա Վյուրսթին: Հաղթեց... Առաջին անգամ էի տեսնում քվիր անձի հաղթելիս: Նա չէր թաքցնում իր ինքնությունը, բայց կարողացավ հաղթել:

Չգիտեի, որ կյանքում այսպես էլ է պատահում: Ե՞ս էլ ունեմ այս տարբերակը: Գուցե ես էլ կարող եմ բացահայտ ի ցույց դնել իմ գոյը և ունենալ արժանապատիվ կյանք:
Ավելի ուշ որոշ քվիր մարդկանց գտա համացանցում: Տեսա, որ մենք էլ կարող ենք երջանիկ լինել: Վերջապես ունեի բավականին համարձակություն և գիտելիք իմ սեռական կողմնորոշվածության հետ համակերպվելու համար: Վերածնվեցի:
Այս փուլում արդեն գիտեի, որ ծնողներիս կողմից ինձ վերագրված անվան հետ չեմ նույնականանում: Չես կարող կարապին անվանել բադիկ և ակնկալել, որ նա մի օր չի հասկանա, որ կարապ է: Որոշեցի հորինել անուն, որը լավագույնս կներկայացներ իմ գոյը: Քելլին ծնվեց: Ես ծնվեցի: Հետո պարզեցի, որ Քելլին իրական անուն է, երկսեռ: Ինձ զգացի տանը: Երբ այն արտասանեցի առաջին անգամ, դրական էներգետիկա ստացա: Գիտեի, որ դա իմ անունն է:
Ավագ դպրոցն ավարտելուն պես ընդունվեցի համալսարան և սկսեցի իրական կյանքում հանդիպել քվիր անձանց: Նաև սկսեցի կամավոր աշխատանքներ կատարել տեղական ԼԳԲՏԻՔ+ հասարակական կազմակերպություններում: Հույս ունեի գտնել աջակցող համայնք, որտեղ վերջապես սիրված կլինեի և կգտնեի ապահով տարածք: Ակնկալիքները պոտենցիալ հիասթափություններ են:
Շուտով հասկացա, որ այն գեյ անձինք, ում հանդիպում էի, կրկին պատկերացումներ ունեին իմ գոյի վերաբերյալ: Նրանք էլ էին կարծում, որ ինձ հետ մի բան այն չէ: Զայնս չափազանց կանացի է, խոսելուս ձևը չափազանց կանացի է, շարժուձևս չափազանց կանացի է, հագուկապս չափազանց կանացի է: Ես չափազանց կանացի եմ: Հասկացա, որ նույնիսկ քվիր համայնքում իմ գոյից անհիրատես ակնկալքներ կան: Եթե ուզում էի ընդունված լինել մի համայնքում, որը պայքարում է ընդունելության համար, պետք է շարունակեի ձևանալ և համապատասխանել նրանց՝ գենդերային կարծրատիպերով պայմանավորված ակնկալիքներին: Պետք էր «տղավարի» լինել: Ըստ երևույթի՝ այս իրականությանը ավելի դժվար էր առերեսվել, քան իմ սեռական կողմնորոշվածության փաստին:
17 տարեկանում ունեցա իմ առաջին սիրային պատմությունը: Ինձ այս հարաբերությունը ստիպեց մտածել, որ ես չափազանց կանացի եմ սեռականորեն ցանկալի լինելու համար: Վերջ տվեցի այդ հարաբերությանը: Մեկ տարի անց մտա այլ հարաբերության մեջ:
Այս հարաբերությունը ևս ինձ ստիպեց մտածել, որ ես չափազանց կանացի եմ սեռականորեն ցանկալի լինելու համար: Ամեն դեպքում, այդժամ արդեն հասկացա, թե ես ով եմ, ինձ ինչ է պետք և ես ինչ սահմաններ և մեխանիզմներ ունեմ ներանձնային հարաբերություններում

կիրառելու համար: Որոշեցի, որ չեմ մտնի հարաբերությունների մեջ մի անձի հետ, ով ամբողջովին չի ընդունի իմ գոյը՝ առանց ակնկալիքների:
Մեկ տարի անց՝ 19 տարեկանում, հանդիպեցի մեկին: Ինձ ասաց, որ ինձ տեսնում է այնպիսին, ինչպիսին կամ: Ասաց, որ նույնիսկ կարող եմ շպարվել և դա ոչնիչ չէր փոխի: Վերջապես ընդունված և սիրված էի ինձ զգում: Գտել էի այն ապահով տարածքը, որը այդքան փնտրել էի:
Առանց դիմակների, պատնեշների կարող էի իմ գոյը ցուցադրել և դրա հետ մեկ տեղ դեռ սիրված լինել: Պատերազմում հաղթել էի... Մի քանի ամիս անց նա ինձ ասաց՝ «Դու չափից շատ կանացի ես ինձ դուր գալու համար»:

Ապահով տարածքը նորից հօդս էր ցնդել, համայնքին պատկանելու զգացողությունը կորցրել էի, սիրտս կոտրվել էր, ինձ չափազանց կանացի էի զգում, չափազանց գեյ՝ գեյ լինելու համար: 20-ամյակիցս մեկ օր առաջ որոշեցի ինքս դառնալ այն ապահով տարածքը, որը մանկուց ի վեր փնտրել եմ: Որոշեցի ամոքել սիրտս, ինձ թույլ տալով լինել այնքան կանացի և այնքան գեյ, որքան կուզեի: Որոշեցի ինձ թույլ տալ լինել, ապրել, ծաղկել, սիրել, զգալ ինքնությունս և պաշտպանել էությունս: Դեռ այդ ճանապարհին եմ, որը ունեցել է իր վերելքները և վայրէջքները:

20 տարեկանում արդեն հասցրել եմ ճանապարհորդել 3 եվրոպական երկրներով, ներկել եմ մազերս, դրեգ արվեստով զբաղվել, ստացել եմ 20-ից 20 համալսարանի բոլոր քննությունները, սկսել եմ մարզվել, վերասահմանել կանացին և արականը ինձ համար, մասնակցել եմ ԻԼԳԱ-Եվրոպայի Ամենամյա ԼԳԲՏԻՔ+ կոնֆերանսին, ուսումնասիրել եմ սեռականությունս, դարձել եմ գլոբալ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, ստացել եմ իսպաներենի B2 մակարդակի DELE սերտիֆիկատ, գտել եմ շատ ընկերներ և հաստատել կապեր, որոնք ինձ թույլ են տվել զգալ տեսնված, լսված, սիրված, գեղեցիկ, ցանկալի, հաջողակ, անկասելի և ՔԵԼԼԻ:

ԵՍ ՔԵԼԼԻՆ ԵՄ – մարդկային կենսափորձ՝ ազատագրված գենդերային ակնկալիքներից, վերասահմանած քվիր հաջողությունը, քվիր ուրախությունը, պայքարելով հանուն քվիր ազատականացման՝ շարադրելով կյանքիս ընթացքը:

Սիրով՝ Ձեր Քելլի:

Boarding Pass
AUSTRIAN
DANIEL VAN/RAFAEL MR
05 0236 9 11JAN
BER
VIE
05 0236/095
011A
etix etkt etix etkt
2572158517950
SWISS
Lufthansa
brussels airlines
Austrian

ԵՐԲ ԵՄ ՏԱՆԸ ԼԻՆԵԼՈՒ

Ռաֆ Դանիելյան

(ԳԼՈՒԽ. ՎԻԵՆՆԱՅԻ 8 ԺԱՄԵՐԸ)

Առավոտյան 7:12: 4-ը հունվարի, Վիեննա, Շվեխատ. ԷՖ դարպասի մոտ, հա, հա, ամենավերջինի: Հայաստանի ու Գերմանիայի ճամփաների միջև: Հենց նոր ժամանել ենք Ավստրիայի մայրաքաղաք ու գուշակիր, թե ի՞նչ: Երբեք չեմ մտածել, որ Վիեննան այսքան սիրուն է...Օքե՛յ: Շատ զավեշտալի է, ու հենց այստեղ է պատմությունը սկիզբ առնում:

Իմ առաջին այցը Եվրոպա: Ամենաանսպասելի, բայց երկար ակնկալված ուղևորությունը դեպի Բեռլին՝ ամենից քվիր քաղաքներից մեկը աշխարհում: Շաաա՛տ երկար սպասված ճանապարհորդություն, որին ես պատրաստվել էի, ու որը հանկարծակի կդառնար իմ երևակայական օրագրի կարճ անցակետը, որը, հավանաբար, պետք է սկսեի գրել, նախքան ինձ այս կրակի մեջ գցելը:
Մերսի, Թիմմի: Շնորհակալություն Բեռլին մեզ տանող երբևէ ընտրված լավագույն տոմսերի համար: Ինչպես նաև, սա չէր իրականանա առանց մեզ՝ Լանայի ու ինձ, մարդիկ, ովքեր ընտրեցին ամենահարմար պահը սանհանգույցից օգտվելու համար:

Մենք «լռված ենք» այստեղ, ու ես չեմ կարծում, որ սա հարմար ժամանակ է խուճապի համար, ոչ էլ մեղադրելու շուրջը բոլորին: Ու ինչ վերաբերում է ինձ, ապա այս պահին կցանկանայի ավելի թեթև տանել ամենը ու կենտրոնանալ իմ փորձառությունը գնահատելու վրա, քանի որ նման հնարավորություններ հեշտ չեն ընդձեռվում հաճախ...ցավոք: Էստեղից սկսած, այս պատմությունը 6 քվիր անձանց շուրջ է պտտվելու, ովքեր երազում էին այս Բեռլինի ուղևորության մասին՝ մասնակցելու երիտասարդական փոխանակման ծրագրին, դրեգի մասին (չնայած դրան, ես կմնամ գլխավոր դերում ու կտամ պատմության իմ տեսանկյունը): Ուղևորություն, որը մենք միշտ անկասկած կհիշենք: Իսկ, թե ինչ եմ հիշում հիմա՝ մեր հաջորդ թռիչքի ժամն է, հա, ու այստեղի օդանավակայանի աշխատողների դեմքերը: Այնուամենայնիվ, մենք վճարեցինք մեր նոր տոմսերի համար և հիմա պետք է սպասենք մինչև ժամը 1-ը Բեռլին գնալու համար՝ մեր վերջին կետին հասնելու համար: Ռոպեներն անցնում են ինչպես մարդիկ, ու մենք այստեղ ենք Վիեննայում, այս ամենի սարկազմը. չենք կարող ասել, որ եղել ենք Վիեննայում, բայց չենք էլ կարող ժխտել փաստը, որ այստեղ ենք հիմա: Ես՝ որպես մեկը, ով չէր ծխում, արդեն մտածում էի այդ ուղղությամբ, չնայած դրան ամեն անգամ ծխարան մտնելիս Կեոնի ու Վալենտինայի հետ,

ամեն մի ծխախոտի հոտը ինձ հիշեցնում էր իրենց մեկնելու ժամին սպասող մարդկանց քանակի մասին: Ինչ խոսք, ես միշտ այնտեղ էի գնում ժամանակը լավագույնս օգտագործելու նպատակով, հանդիպելու հմայիչ անծանոթներին ու խոսակցություն իրենց հետ սկսելու մտքերով՝ ծխախոտ խնդրելու պատրվակով: Այստեղ է, որ սպասող մարդկանց ճանապարհները խաչվում են: Էսթետիկա, կարելի է ասել: Ինչը չէր կարելի ասել այնտեղի խանութների մասին՝ լի ալկոհոլով ու շպարի պարագաներով, կարծես դրանք են, որ մարդկանց իրոք նման պահերին անհրաժեշտ են:
Գուցե դուք չգիտեիք, բայց քայլելու փոխարեն պայուսակներ քարշ տալու համար նախատեսված հատուկ հատվածներով տեղափոխվելը ճանձրույթի հաջորդ էտապի սկիզբն էր: Ու ինչ-որ մի պահի, EF35 և EF33 դարպասների միջանցքում, մեզ բռնեցինք այն մտքի վրա, որ շատ ուրախ ենք, որ այստեղ ենք, նույնիսկ, եթե պետք լիներ շրջվել ու հետ գնալ Երևան, ու երբեք չհասնել մեր փոխանակման ծրագրին, ինչի համար ծով էինք կտրել, անցել:
Ամեն դեպքում նման մտքերը այդքան էլ ճիշտ չէին հնչում, քանի որ հեշտ չէր, ու կարճ ճանապարհ չի պահանջվում, որպեսզի ստանաս հնարավորություն ճանապարհորդելու դեպի Եվրոպա, ստանալ Շենգեն վիզա, տեսնել Եվրոպան, շնչել այդ մաքուր օդը, այդ ազատության զգացողությունը ու ազատ մտածելակերպը, մարդկանց, որ տեսնելով քեզ, չեն հարձակվում վրադ քո տեսքի պատճառով, կամ այն պատճառով, թե ում ես նայում: Ինչ ափսոս կլիներ այս ամենն անել այստեղ հասնելու համար, ու վերադառնալ Երևան, որովհետև մի քանի րոպեով ուշացել ենք: Մինչդեռ մենք կարծես փոքր երեխաներ լինեինք, այն երեխաների նման, որ ստանում են մի փոքր նվեր Ամանորին այն ծնողներից, ովքեր ավելին իրենց չեն կարող թույլ տալ, ու միևնույն է, փոքրիկները երախտապարտ են ու բավարարված՝ ստանալ նույնիսկ ամենաչնչինը:
Նման պահերին հիշում եմ էն բոլոր հնարավոր հանգամանքներն ու դեպքերը, երբ մարդիկ կարիք ունեն տեղափոխվելու Եվրոպա՝ ավելի լավ կյանքի համար, հանուն իրենց կամ իրենց սիրելիների ապահովության: Բայց կան սահմաններ, կա վիզա, գումարի հանգամանքը, կան մարդիկ, որ կնայեն քեզ ու կասեն, որ հետ գնաս այնտեղ, որտեղից եկել ես, որտեղին որ պատկանում ես: Բայց, ո՞վ է ընտրում, թե մեկ ուրիշ մարդ որտեղին է պատկանում: Ու քանի անգամ եմ առերեսվել նման իրականության հետ, երբ ապրում ու սովորում էի Ռուսաստանում: Եթե գումար ինձ տային ամեն անգամ իմ ազգությունը շեշտելու, կամ իմ քվիր լինելու համար, կամ էլ, թե ինչքան եմ տարբերվում

մեծամասնությունից, ես երևի հիմա կլինեի հարուստ ու ընկճված: Արտերկրում՝ ավելի հստակ Ռուսաստանում ապրելու իմ փորձառությունը ամենալավը չի եղել: Այնուամենայնիվ, ես դա դեռ ընդունում եմ, որպես իմ անձնական փորձառություն: Մի գուցե մի փոքր տրավմատիկ, որն էլ ինձ տեղ է տալիս երկմտելու, արդյոք ես երբևիցե կցանկանամ տեղափոխվել մեկ այլ երկիր, ավելի լավ կյանք, ավելի ապահով տարածք ու ավելի բարի մարդկանց որոնելու համար:
Մենք անցել ենք ճանապարհի կեսից ավելին, մի ժամ է մնացել մինչև չվերթը ու սրանք են իմ մտքերը, երբ ամեն անգամ ես մտածում եմ իմ ապագայի մասին նման երկրում, ինչպիսին Հայաստանն է. ու՞ր գնամ այսքանից հետո, որտե՞ղ եմ ինձ ապահով զգում, ե՞րբ ու որտե՞ղ են իմ իրավունքները գոյություն ունենալու, արդյո՞ք կդառնամ հասարակության մի մաս, որն ինձ ընդունում է այնպիսին, ինչպիսին ես կամ, ու ոչ այնպիսին, ինչպիսին իրենք են ուզում, որ ես լինեմ: Ու ամենակարևորը, ի՞նչ անել ու ու՞ր գնալ՝ որպես քվիր անձ, լսված ու տեսանելի լինելու համար, չթիրախավորված, բարձրաձայնել կարիքների մասին ու չկոչվել էքստրեմիստ: Վերջապես տեսնում եմ օդանավը, որ մեզ տանելու է տանից ավելի հեռու: Արդեն ժամը 1-ն է ու մենք բարձրանում ենք օդանավ:

Եվ հիմա, նստած այստեղ՝ պատուհանի մոտ, այս իմ բոլոր մտքերի ու կորած զգացմունքներիս մեջ, նայում եմ ուղիղ Արևին, զգում եմ անհարմարություն, մտքովս անցնում են կանոնները, հիերարխիայի առկայությունը, կարծես թե դա միակ միջոցն է, որով մարդը կարող է ապրել ու թե ինչու են մարդիկ փնտրում իրենց տունը այլ վայրերում: Մինչ մենք պատրաստվում ենք թռիչքին՝ լսելով անձնակազմի կողմից տրված բոլոր հրահանգները, ես մտածում եմ, թե՞ արդյոք ես երբևէ կկարողանամ ազատ լինել այստեղ՝ Հայաստանում, նույնչափ ազատ, ինչպես Եվրոպայում:
Ու երբեք չնայեմ հարևանների այգուն՝ կարծելով, որ այն բնականից կանաչ է, կամ էլ, ինչպես հայերն են ասում՝ «հարևանի հարսը ավելի լավն ա»:

Սա էր իմ պատմությունը, կամ էլ «ինսայթը» ու իմ ունեցած ճանապարհորդության մի մասը: Ավելի ուշ, այն, ինչ տեղի կունենա Բեռլինում, կմնա այնտեղ, իմ հիշողության, սրտի մեջ ու ներաշխարհում: Մեկ տարի անց, հիշելով այս պատմությունը, ես կարող եմ ասել, թե որքան է դա փոխել ինձ և արտերկրում՝ Եվրոպայում, կամ էլ Հայաստանում ապրելու իմ տեսլականը, որտեղ մարդիկ դեռ շարունակում են խտրականության ենթարկվել տարբերվելու, քվիր լինելու համար,

նաև սեփական համոզմունքներ, հավատ, լեզուներ և մշակութային ծագում ունենալու համար: Սա իրականություն է, որին ես չեմ ուզում համակերպվել, բայց սա այն իրականությունն է, որը ես ուզում եմ փոխել իմ և բոլորի համար: Եվ հարցը մնում է բաց. ե՞րբ եմ տանը լինելու:

Ունե՞ր են Նոր Մտավորականները
Ամենաքան տոյանավոր կամ կին, ով՞
1. Կանենում է մտածել,
2. Որոր կռանք, ուներ գիտեն, որ մարդու
կամքը ազատ է ստրկության բանականության,
3. Կրանք, ուներ ստրկորում են իրենց իսկ կամքը և
4. Չեն հարմանափում ապր հանմեել հուսահատության
կուսքին տանանականից ցնեին անկարողության
ցունցիներում. Ինչպես որ
5. Չեն հանհանափում ազիատից հանմեել խառնարի
դարաշրջանին և բռնատարների իշխանությանը
Լև Ռեոդ
Փիլիսոփա, գրող
Օրդինարիզիզի
Փիլիսոփայության
Հիմնադիր
SCAN ME
«Նոր Մտավորականներ»
Ստրկության և Դրության
Ազդեցության Կենտրոն

Խավարից/Ծայրահեղականությունից Լույս/Բանականություն
Սևակ (Լուսաբեր) Կիրակոսյան

1/8. Ծայրահեղականի Ծնունդը

Երբ 12-13 տարեկան երեխան հիտլեր է նմանակում, գուցե ինչ-որ բան այն չի՞ այդ հասարակության հետ:

Մանկական հիշողություններիս անբաժանելի մասն են կազմում բռնության դրվագները, երբ ընտանիքի պատրիարխը՝ հայրիկը, ծեծում էր ինձ, մամային, ընտանիքի մյուս անդամներին: Ամենավառ հիշողություններիցս են՝

- Երբ Զմեռ Պապին բերում էր նվերներ ու մենք գտնում էինք դրանք ու երբ ես տեսա, որ Զմեռ Պապին իրականում մաման էր: Էս հիշողությունների շղթան ուրախության ու հիասթափության մասին է: Բայց հիասթափությունը ճշմարտության գիտակցման բերեց, ուստի դա դառնաքաղցր հիասթափություն էր, լուսավորող:

- Երբ հերթական կռվի ժամանակ պապան մամային ասեց «ախպորդ կասես վաղը գա քեզ տանի հետ, էղա՞վ աղջի»: Դա կողքի սենյակում էր:

Ու հետո լսվեց կոտրվող ապակու շրխկոց, մորս անօգնական լացը: Ու իհարկե ես էլ սկսեցի լացել անօգնականությունից: Ապակին կոտրվեց մորս մարմնով, երբ «տուն պահողը» բրդեց մորս ու գցեց ապակեղենի վրա…

Իմ միջի ծայրահեղականը ծնվել ա «միացում» կործանարար շարժման հետ: Ինձ էդ բառը հիշեցնում է հիտլերի Anschluss օպերացիան: Էդ բառն էլ է նշանակում «միացում» կամ «կապ(ում)»: Ընտանեկան բռնության տարբեր էպիզոդները, երբ ինքս եմ ծեծվել, երբ տեսել եմ ընտանիքի այլ անդամների ծեծվելն ընտանիքի պատրիարխի կամ հոր կողմից, ցավի, անպաշտպանության, զայրույթի, մեղավորության զգացողություններ են ծնել իմ մեջ:

Սմբատ Բյուրատի անվան թիվ 125 դպրոցում ունեինք պատմության ուսուցչուհի, ընկեր Ավետիսյանը: Նա մեծագույն ատելությամբ էր խոսում թուրքերի մասին: Երբ «թուրք» բառն արտասանում էր, ոնց որ թքեր: Թաշնագա-հանրափեդա-ղարաբաղգոմիդե ագան «դասագրքերը» տիկին Ավետիսյանի ատելության հետ համատեղված մեզ զոմբիացնում էին, մեր մեջ սերմանում էին ատելության մշակույթ ու զգացողություն:

Մենք վեհագույնն էինք, հնագույնը, առաջինները, անսխալականները: Ամեն ինչը մեր դեմ էր, որովհետև մենք ճշմարիտ էինք, առաքինի, հայ քրիստոնյա: Ամեն ինչը մերն ա էղել, և ուստի պետք ա հետ բերվի՝ Վան, Ուրմիա, Ջավախք, Բաքու: Իսկ եթե ուզում ենք մեր հերոսների հերոսի՝ «Մեծ» մականունով Տիգրանի արժանի հետևորդները լինենք, պետք ա Սիրիա ու Երուսաղեմ «հետ բերելու» մասին էլ խորհենք…

Ես ինձ համարում եմ դարաբաղ անիծված կոմիտեի, հայկական ծայրահեղականության ու նացիոնալիզմի զոհը: Այսինքն՝ եթե Հայաստանը չգնար «բաբերի հողեր հետ բերելու» կործանարար ճանապարհով, եթե «ուժն է ծնում իրավունք» հանցավոր կոնցեպտը չլիներ, ապա բռնությունը, ֆիզիկական ուժով հարցեր իբր «լուծելը» չէր դառնա նորմա: Ու անգամ եթե մի կոնկրետ տանը լիներ ընտանեկան բռնություն, ցիվիլ հանրության մեջ կգար ոստիկանություն կամ հարևաններ, կպաշտպաներ ընտանեկան բռնության զոհերին: Ուժով, ֆիզիկական բռնությամբ խնդիրներ իբր «լուծելը» մնացել ա թե քաղաքական, թե ներընտանեկան հարցեր լուծելու լեգիտիմ գործիք էս հասարակության մեջ:

2/8. Ծայրահեղականի Ձևավորումը



Դպրոցում պատմության ուսուցչուհու դասավանդած ռասիզմ ու քսենոֆոբիան ամրապնդվեցին համալսարանում: Ինչ էկզոտիկ էր Մանկավարժականի Կուլտուրայի ֆակուլտետի իմ փորձառությունը. համաշխարհային գրականության դասախոսը, որի ազգանունը չեմ հիշում, անձամբ ինձ հանձնարարել էր արևմտահայերենից արևելահայերեն թարգմանել «Սիոնի իմաստուններու փրոթոգոլները»: Անբարոյականության ու փչացածության աստիճանը: Ես, ում տատին Ուկրաինայում ապրող հրեա էր, թարգմանում էի հակասեմական, կեղծ մի «փաստաթուղթ» առ այն, թե ինչպես էին հրեաները, իբր, ծրագրավորում գրավել աշխարհն ու ստրկացնել մարդկանց: Մի օր էլ կուրսի գերազանցիկներին, որոնց մեջ ես միակ արական սեռի ներկայացուցիչն էի, տարել էր «արիական», ծայրահեղ աջական ինչ-որ կուսակցության հետ հանդիպման:

Իսկ համաշխարհային պատմության դասախոսն իր գործընկերոջ մի «գիտական» թեզ մեզ ներկայացրեց մի օր, ըստ որի Թայվանը հիմնադրել են… վանեցիները, Վանի թայ են հիմնադրել: Ու նա ասում էր «այո, այո, սա գիտական թեզ է»: Գրադարանագիտության դասախոսն էլ իրա երազներն էր պատմում դասախոսության ժամանակ: Օրինակ՝ ինքը երազում տեսել էր, որ Ադամի կերած արգելված պտուղը ծիրան ա էղել: Եվ ուստի, ամեն բան հայերից ա գալիս, քանի որ ծիրանը հայկական ա ըստ դասախոսի:

Ես ինձ համարում եմ ղարաբաղ սև կոմիտեի զոհը: Ես անցել եմ թաշնագների, հանրապետագանների և, ընդհանուր առմամբ, ղարաբաղ գլխակեր գոմիդեի կողմից ծննդաբերած «կրթական» համակարգի միջով: Նրանք ինձ դարձրել էին գոբլինի, օռկի, ծայրահեղականի գիտակցությամբ արարած: Հենց համալսարանական տարիներիս սկսեցի կարդալ հիտլերի «մեյն քամփֆ» շիզոֆրենիկ խզբզոցը: Հերիք չի կարդում էի, մի հատ էլ նշումներ էի անում էդ «ակունք իմաստության» աղբամանից: Հանցագործով կարան հիանան հանցագործները, ստրուկներն ու տգետները:

3/8. Ծայրահեղականի Օրագիրը



Օրագրումս ու մանկավարժականում դասախոսությունները կոնսպեկտելուց ես սկսեցի ստեղծել իմ հատուկ նշանները, որ գրելիս ավելի արագ գրեմ, իմ սիմվոլիկայի հիմքում ընկած էր սվաստիկան, քանի որ ուղեղս արդեն լվացել էին, քանի որ արական ծայրահեղականությամբ էի հիանում, պարիս հերունի էի կարդում ու տակս լցնում հպարտությունից, որ Սֆինքսն ու Ակրոպոլիսը հայերն էին սարքել ու Պաչաքամակ ամերիկյան աստվածությանը հայերն էին ստեղծել, Պաչել + քամակ = Պաչաքամակ: Ընթերցող ջան, քեզ թվո՞ւմ ա՝ ես հիմա ղժժում եմ հայուգենի (տգետ, ծայրահեղական, պսևդոգիտական ու հուզական նացիոնալիստների ու ծայրահեղականների) վրա:

Չէ, «Հայերը և Հնագույն Հայաստանը» ակունք իմաստության մտակույտի մեջ է մարդը սենց «գյուտ» արել, 226 - 232 էջում էլ ընթերցում ենք «մեծն գիտնականի» այն «համոզմունքը», որ հայկական էր նաև… Տրոյան: Ու ես հիանում էի էս «գյուտերով» ու «փաստերով»: Բա իմ վրա հրեշավոր ձևով չի ղժժացե՞լ մի ամբողջ շամանա-ծայրահեղականական էկոհամակարգ՝ փորձելով ինձ դարձնել տգիտության ու խավարի փայ:

4/8. Ծայրահեղականի Գաղտնիքը

«Եւ որպէսզի այդ յայտնութիւնների առատութեամբ չիպարտանամ, ինձ տրուեց մարմնի խայթ, Սատանայի մի պատգամաւոր, որ բռնցքահարի ինձ, որպէսզի չգոռոզամտանամ»

~ Պողոս առաքյալ

Պողոս առաքյալի «մարմնի խայթը» տարբեր մեկնաբանությունների տեղիք ա տալիս, ներառյալ էն, որ գուցե նույնասեռ (հոմոսեքսուալ) կամ երկսեռ (բիսեքսուալ) ա եղել ու չի ընդունել սեփական սեռականությունը կամ դրա մի մասը:

Ես՝ որպես հայ (որպես ծայրահեղական), վեհ էի, առավելություններ ունեի այլ ազգերի նկատմամբ: Բայց այ որ «ծակս չկորցնեի», ինձ ուղարկվել էր «սատանայի մի պատգամավոր», ինչպես քաղաքացի Պողոսն ա ասում: Այո, ես հայ էի, ես հայրենասեր էի, հայանվեր էի, հայասուն, հայանպաստ, հայապաշտ, հայաշունչ, հայ-հա~յ էի: Ես մտածում էի ստոր ու նենգ թուրքերից, պարսիկներից, վրացիներից ու ադրբեջանցիներից մեր պապերի հողերը հետ բերելու մասին, ազգի մասին: Ես դեմ էի «արվամոլությանը», ինչպես գրել եմ օրագրումս: Որովհետև մեզ պետք են զինվորներ: Զինվորների գործարաններ: Բայց ես ինքս «արվամոլ» էի…

Իմ նույնասեռությունը քննադատում էր Հայ առաքելական եկեղեցին, քննադատում էին իմ ծայրահեղական «եղբայրները» և ողջ ծայրահեղականական էկոհամակարգը:

Ես նախ սկսեցի կարդալ բիբլիան: Վստահ էի՝ բնագրում այլ ձևով էին գրված որոշ տեղեր, ու դրանք սխալ էին թարգմանված: Անգամ եբրայերենով սկսեցի կարդալ Հին Կտակարանը: Իմ ենթադրությունը մասամբ ճիշտ էր: Տողերը երբեմն սխալ էին մեկնաբանվում կամ թարգմանվում: Բայց Բիբլիայի ընթերցում ինձ դարձրեց ինքնավստահ, կրթված ու թեմայից լավ տեղեկացված աթեիստ:

Ծայրահեղականի Մահը

Էրազմուս Մունդուս համաեվրոպական ծրագրի շրջանակներում մի փոխանակման ծրագրով 2008 թ.-ին Էստոնիա գնացի: Պարզվեց՝ Էստոնիայում նույն ծառերն էին աճում, նույն երկինքն էր, նույն մարդիկ էին: Ուղղակի Երևանից ավելի ցուրտ էր:

Ես, փաստորեն, առավել չէի զուտ նրանով, որ հայ էի: Հայաստանում աճող անտառներն էլ առավել չէին զուտ նրանով, որ Հայաստանում էին աճում: Ես ինձ Էստոնիայում էլ զգում էի տանը: Իմ գիտակցության սահմաններն ընդլայնվեցին ու միջիս ծայրահեղականը ստացավ վերջնական հարվածներ, որոնցից էլ մահացավ:

5/8. Պուտլերի Այցը

2014 թ.-ին Հայաստան այցելեց պուտլերը (հայտնի նաև որպես վլադիմիր Պուտին): Ես էլ մասնակցեցի Պուտլերի դեմ այցին: Ինձ դուր չէր գալիս հետևյալը.

1.Պուտլերը նախ 2014 թ.-ին գնաց Գյումրի իրա զորքերի մոտ, ու Գյումրին ներկայացրեցին որպես ռուսական Ալեքսանդրապոլ ռուսական մեդիաներով: Այսինքն բռնապետը, իրան երևակայելով ցար, ցույց էր տալիս, որ էկել ա իրա գուբերնյա, ու իրա զորքերին առաջին հերթին այցելելն ավելի կարևոր ա, քան պետության մայրաքաղաքը:

3. Պուտլերն արդեն հալածում էր ԼԳԲՏ մարդկանց:

4. Ուկրաինայի մի մասը՝ Ղրիմը, պուտլերը ենթարկել էր «միացման» ու «բաբերի հողեր» էր հետ բերում սատկած ռուսական կայսրության համար:

Ցույցի ժամանակ իմ ծանոթը՝ Լալան, հետը բերել էր մեծ ԼԳԲՏ դրոշ: Հայուգեն գողերը հարձակվեցին, գողացան դրոշը Լալայի ձեռքից: Ես հետ բերեցի դրոշի ձողը, դրոշն էլ հետ զավթեցինք նացիոնալիստ լնգուլավազ գողերից: Դա առաջին անգամ էր, երբ Հայաստանում ԼԳԲՏ դրոշը ծածանվեց: Էդ օրը մենք (ես, Լալան և մեկ այլ ակտիվիստ) նախ հարձակման ենթարկվեցինք նացիոնալիստ հայուգեների (հայուգեն՝ տգետ, ագրեսիվ պահպանողականներ) կողմից, ապա VIP ոճով ձերբակալվեցինք սերժիկի մենթերի կողմից. 3 ակտիվիստ, մոտ 12 ոստիկան ու փակ գռուզավիկ երեքիս համար: Մենք վտանգավոր էինք Պուտլերի համար, որովհետև ԼԳԲՏ և Ուկրաինայի դրոշներն էինք կրում:

Իմ իսկ նկարած փաստագրական ֆիլմի հենց սկզբում ձերբակալման կադրերը կան.

SCAN ME!

6/8 Սոֆիկի Ծնունդը

2017թ.-ին Ֆրանսիայում փոխանակման ծրագրի էի, արդեն 10 ամսով: Ծրագրի ժամանակ մի խումբ ուսանողներ ու տնօրենը ճգնաժամային իրավիճակ ստեղծեցին իմ համար:

Աթենաս աստվածուհին ծնվեց Զևսի գլխում: Նոր ծննդի ցուցիչը կամ սիմպտոմը Զևսի ուժեղ գլխացավ էր: Հեփեստոսը կացնով 2 մասի կիսեց Զևսի գլուխը և դուրս եկավ Աթենաս Պալասը:

Սոֆիկս ծնվեց նմանատիպ ճգնաժամային իրավիճակում, երբ ինձ Ֆրանսիայում զրկեցին իմ կացության վայրից ու կամավորության ծրագրից:

Սոֆիա Շանտի Օմմմ:
Սոֆիա - իմաստություն:
Շանտի - խաղաղություն:
Օմմմ - արարչության վիբրացիաները:

Սոֆիկը ցինիկ տրավեստի կերպար ա, ով խոսում ա լուրջ թեմաներից. քաղաքականություն, ծայրահեղականու - թյուն, նացիոնալիզմ, ատելություն, տգիտություն: Սոֆիկի հումորի զգացողությունը ոմանք կնկարագրեն որպես կրինժ, այլք՝ ունիկալ:

Երբ վազգենմանուկյաններն ու այլ փրգիչ-մրգիչեղեն ջրեր էին պղտորում, արյուն հեղելու կոչեր էին անում Երևանի փողոցներում, Սոֆիկը դրանց էլ էր անդրադառնում:

7/8 Տրանսպ՝ Մանկապարտեզում

2014 թ.-ին «Թեքալի գործընթաց» խաղաղաշինական ծրագրով գնացել էինք սահմանամերձ գյուղ՝ քարոզելու խաղաղություն ու կիսելու մեր փորձառությունը: Նկարվեցի գյուղի մանկապարտեզում: Նկարը 5 տարի Ֆեյսբուքում դրած էր:

2019 թվին նկարը պետք էկավ քոչիկականներին: «Նիկոլը 100 օրից գնալույա, էսա գալիս ենք» խաղի շրջանակներում պետք էին քաղաքական թիրախներ, դեմոկրատիան ու 2018 թ.-ի փոփոխությունները որպես վատ ու վտանգավոր ներկայացնելու համար տեխնոլոգիաներ:

Քանի որ պատերազմ էլ դեռ չէր եղել, ռևանշիստների համար մանիպուլյացնելու թեմաները շատ ավելի քիչ էին: Իհարկե կրեմլի մետոդիչկաների կամ ձեռնարկների համաձայն ԼԳԲՏ թեմաներն ամենակրքոտն ու հեշտ մանիպուլյացվողներն էին:

Նկարս իրանց hayugen-arm.ru կայքերով տարածելու լոգիկան հետևյալն էր.

Սա հայտնի գեյ ա,
Սա նաև փաստորեն մանկապիղծ ա,
Սա նիկոլական էլ ա,

Փրկեք ձեր էրեխեքին սենցներից՝ աթոռը Նիկոլի տակից տարեք, բերեք մեզ տվեք:

Անգամ Սիվիլնեթով ելույթ ունեցած ու քոչիկականների կողմից խաբված մեկն ա խոստովանել, որ հոմոֆոբիան ինստիտուցիոնալ էին սարքել ու կիրառում էին իրանց ռևանշիստական թաց երազներն իրագործելու համար:

Ահա տեսանյութի QR կոդը, որտեղ ես բացատրում եմ այս ամենը և ցույց տալիս ապացույցներ:

SCAN ME!

Իհարկե հայու նեխած գեները կախաղան էին հանում ինձ, մանկապարտեզի տնօրենին ու Նիկոլին: Ատելության խոսքն ու կոչերը վխտում էին միշիկա սերժա-քոչիկա աղբանոցներում:

Հայոց նորագույն պատմության մեջ հոմոֆոբիան ինստիտուցիոնալիզացվել ա դեռ 90-ականներից, փրգիչ-մրգիչեղենի կողմից: «Սպարապետ» մականունով քաղաքացու դիրքորոշումը տվյալ հարցով հաճախ ա մեջբերվել ատելության մարտիկների կողմից: Տվյալ քաղաքացին ինքն իրան ասոցացնում էր պետության հետ, իրա տեսլականը պետության

տեսլականն էր՝ ծայրահեղականության դասական կանոններով: 2018-ից տվյալ գործն առաջ են տանում նույն փրգիչ-մրգիչները, «ազատագրիչները» ու այլ «հերոսներ»:

8/8 Նոր Մտավորականի Ծնունդը

2020 թ. դեկտեմբերի 9-ին ստեղծեցի «Հեդոնիստական ստոիցիստական կուսակցություն» էջը: Հետո բացահայտեցի, որ մինչև ինձ ավելի էլեգանտ ձևով էդ երկու փիլիսոփայություններն իրար սինթեզելուց ավելին էր ապրել Այն Ռենդը կամ Ռենդը: Իր փիլիսոփայությունը նա կոչել ա «օբյեկտիվիզմ»: 2017-ին Սոֆիկիս ծննդից հետո երկրորդ կարևոր ու ավելի օպերատիվ, գործնական ինքնությունը, որը ծնվեց իմ մեջ և որի մեջ ես վերածվեցի, հենց օբյեկտիվիզմ փիլիսոփայությունն ա: Աշխարհիկ, տրամաբանական, անհատի ազատ միտքը, մարմինն ու գրպանը պաշտպանող փիլիսոփայություն:

Երևանում արդեն դե ֆակտո գործում ա «Նոր Մտավորականներ» Կրթական և Դրական Ազդեցության Կենտրոնը: Նաև ծրագրում եմ բացել New Intellectuals անունով հոսթել: Երևի ղարաբաղ-անտեր կոմիտեական Հայաստանում կլինի առաջին բիզնեսը, որի մուտքի մոտ կծածանվեն տարածաշրջանի բոլոր պետությունների դրոշները, ներառյալ՝ Ադրբեջանինը: Հոսթելի տեսլականն ա՝ «Մեր հարևան երկրներից և Հայաստանից ժամանող հյուրերն ունեն ապահով և առույգ համայնք, որում կարող են ծաղկել»:

Հայաստանն էսօր նման ա 1920-ականների Գերմանիային: Մեր ընտրությունն է՝ ռևանշիզմով, վրեժով, նացիոնալիզմով գնա՞լ 1933-ի Գերմանիա ու հասնել մեր 1945 թվի՞ն, թե՞ խուսափել (եթե հնարավոր է) դրանից ու գնալ 1990-ականների Գերմանիա՝ աշխարհիկ, դեմոկրատական, բաց բոլոր հարևանների, էթնոսների, սեռականությունների համար: Ես նպաստում եմ երկրորդ սցենարին:

Զրույցներ
Անանա Էվոյան

Ամեն անգամ ինչ-որ նյութ կարդալիս, որ գրված է լինում սեռական փոքրամասնություն, փոքր շոկ եմ ապրում, որովհետև իմ շրջապատում, իմ տարիքի մարդկանց մեջ առնվազն 60-70 տոկոսը քվիր մարդիկ են: Մարդիկ կան՝ կարծում են, որ բոլոր մարդիկ էլ բիսեքսուալ են, ուղղակի կյանքը կարճ է, շատերի մոտ առիթ չի լինում ամբողջովին փորձել ու հասկանալ իրենց սեռականությունը: Բայց դա չի կարևորը, այլ խոսակցությունները, որ ունենում եմ այդ 60-70 տոկոսի հետ ամեն օր, չատեր ու զանգեր, կարճ կամ երկար, օրվա բոլոր հնարավոր ժամերին, որոնցից կազմված է այս պատմվածքը:

- Ես ուզում եմ իմ պատմությունը պատմեմ:

- Դու կուզե՞ս էտ պատմությունը ձեր մոտի քո չուզողները իմանան:

- Հա:

Երկուշաբթի ա, սեպտեմբերի 25-ը: Ես եկել եմ աշխատանքի շաբաթ օրվաս շորերով: Պատկերացնում ես, չէ՞:

Դուրս եկա լանչի համար բան առնեմ, ճամփին ավտոներ էին դե կանգնած, մեկի վրա ստիկեռ էր կպցրած՝ baby in car, մտածեցի որ ես ավտո ունենամ, ես էլ կկպցնեմ, բայց չի լինի մեքենայում ոչ մի երեխա, it’s me who is the baby in the car.

Օրը մեջ կծել-մծելովա անցել իմ դպրոցական կյանքը:

Նորմալ լինելուց լավա, իմ կարծիքով:

Երբ նոր ու հաճելի մարդ ա հայտնվում իմ կյանքում, մտածում եմ՝ ինչքան կտխրեմ, եթե ինքը գնա երկրից, եթե իր կյանքը ձախողվի, եթե հիվանդանա, եթե ֆինանսական խնդիրներ ունենա, եթե տեսնեմ, թե ոնց ա ծերանում, եթե նեղված լինի, եթե իմանամ՝ չի հասցնում նորմալ սնվի և այլն, ու ես անզոր լինեմ:

Ես ջղայնացա, նախ առաջինը: Հետո ընդեղից տղերքը եկան: Դասատուն ա գալիս, ինձ հանում ա ոտքի, ասում ա սեր

բան չկա էս տարիքում, էտ ամեն ինչը շպրտի աղբը, ու նստի դասիդ:

Իհարկե իմ մաման ինձ շատ ա ծեծել:

Երբ ես իմ մեջ էի պահում, ես ինձ զգում էի շատ մենակ:

Դասղեկի ժամ էր: Ես նստած էի, դասատուն ասեց՝ բա ուր են մեր տղաները:

Ասեիր, girl, look at your shoes!

Ես արդեն երեսունն անց եմ, ու հասկացել եմ, որ եթե էսքան ժամանակ տնեցիներին չեմ ասել, չեմ էլ ասի: Ամենասուր զգացողություններովը ընկերներիս ասելն էր, չորս ընկեր էինք, ես բանակում էի, իրանք քաղաքում էտ ժամանակ: Վիրահատել էին ինձ, ու երբ պառկած էի, իրենք եկել էին ինձ տեսության: Էտ պահին շատ էի կարոտել, ու էմոցիոնալ էի ու մտածեցի՝ ճիշտ պահն ա ասելու, ամեն մեկի հետ առանձին խոսեցինք պալատում: Ուրախացա, որ բոլորն էլ հեշտ ու ուրախ ընդունեցին, էն ժամանակ մեր ընդհանուր շրջապատում, մեր ընկերների մեջ գեյեր չկային:

Մենակ մի ընկերս էր, որ սխալ էր հասկացել ու իրան թվացել էր՝ էտ որ ասում եմ, նշանակում ա՝ իրան եմ սիրահարված, ու հիմա ինքը պետք ա ինչ-որ բան պատասխանի:

Աղջիկը որ աղջկա համբուրում ա վհուկություն ա, միշտ ասել եմ:

Տուն էի գնում հուզված, արցունքներով: Վազեցի մամայիս պատմեցի:

Բայց դու գիտես չէ՞, որ լացելը նորմալ ա:

Ախպորս մասին պատմություն ա, բայց ոչ մեկի չասես: Ինքը ինձնից տասերկու տարի մեծ ա, ու ես 14 տարեկանից աշխատում էի, փողիս կեսը իրան էի տալիս, որովհետև շանտաժ էր անում, որ մամային կասի, որ գեյ եմ:

Ինչի՞ ա, որ մարդիկ էտ ամեն ինչը մեզնից ավելի շուտ են նկատում, հասկանում մեզնից ավելի շուտ:

- Ու էտ պատմությունս մեջս սենց, ոնց ասեմ…, մեջս սենց բանա ա առաջացրել…

- Ագրեսիա՞:

- Չէ:

Էտ դասարանում հիմա որ նայում եմ, 4-5 հոգի են հետերոսեքսուալ, բայց էն ժամանակ իրար բզկտում էին, բոլորը բոլորին վիրավորում, ծեծում, ձեռ առնում:

Տղաները կռիվ էին անում, աղջիկները իրար մեջ քչփչում:

- Օջախային մազաթափություն մուրուքի շրջանում սթրեսից:
- Մազերը միշտ աճում ու թափվում են սխալ տեղերից:
- Ավելի լավ խոսքեր երբևէ չեն արտասանվել:

Ես չարացած եմ պապայիս վրա, շատ շատ շատ:

Ես էս տարի գնացել էի Լեհաստան, ու առաջին անգամ էր, որ ես մենակ էի ճանապարհորդում, ու երբ հասել էի օդանավակայան, ու հանկարծ նկատեցի, որ մի քանի տղա ինձ են նայում ու խոսում, ծիծաղում: Ես զարմացած մտածեցի՝ փաստորեն ստեղ էլ են սենց անում, մեկ էլ, երբ ավելի մոտեցա, դե իրանք իմ արտաքինից չէին հասկացել, որ ես հայ եմ, լսեցի, որ իրենք հայերեն են խոսում, վիրավորական բաներ էին ասում: Ու ես մոտեցա իրենց, բարևեցի ու ասեցի.
- Առաջի՞ն անգամ եք Եվրոպայում:

Եվ այլն, և այլն, խոսակցություններն ու զրույցները շարունակվում են, մարդիկ ստեղծում են հարաբերությունները, հարաբերությունները ստեղծում են գաղափարները և գաղափարները կերտում են աշխարհը: Ես լավատես եմ, քանի որ իմ ընկերները ստեղծում են այնպիսի հարաբերություններ, որոնք ստեղծում են այնպիսի գաղափարներ, որոնք կարող են հանգեցնել միայն ավելի լավ ապագայի:

Протокол
изъятия вещей и документов

г. Москва «24» июня 20 г.

Я оперуполн. по розыску отдела Розыска по Тверскому р-ну г. Москвы л.с. [illegible] [illegible]
(Должность, фамилия, имя, отчество лица, составившего протокол)

руководствуясь требованиями ст. 27.10. КоАП РФ, составил настоящий протокол об изъятии вещей, явившихся орудиями совершения или предметами административного правонарушения, и документов, имеющих значение доказательств по делу об административном правонарушении и обнаруженных на месте совершения административного правонарушения либо при осуществлении личного досмотра, досмотра вещей, находящихся при физическом лице, и досмотре транспортного средства, при осуществлении осмотра принадлежащих юридическому лицу территорий, помещений и находящихся у него товаров, транспортных средств и иного имущества, а также соответствующих документов.

Сведения о лице - собственнике изымаемых вещей и документов:

Наименование организации Отсутствует Г. Р.
(фамилия, имя, отчество индивидуального предпринимателя), ИНН

Место нахождения организации (место жительства физического лица) [illegible]

Дата рождения [illegible]

выдан (иной документ)
(когда, кем)

[illegible] отд. по борьбе с преступ. Розыска

изъятых вещей и документов с указанием их стоимости:

изъято: мелкие наркотики
на которых было написано
следующее
«Мусорам ЗАПРЕЩАЮТ
НАШИ права.»

Дашина Т.Г.

Պիկետի պատմություն
Տէգրան Հովհաննիսյան

Դուք երբևէ՞ զերվել եք մտածելով պետության փիլիսոփայության մասին: Պատկերացրեք՝ բոլորն արդեն քնած են, և դուք հնարավորություն ունեք ձեր սեփական ժամանակն անցկացնելու, բայց չեք կարողանում այլ բան անել, քան պառկել անկողնում դրսի հագուստով և մտածել: Նույնիսկ ցանկալի մղումներին, ինչպիսիք են խորտիկ ուտելը կամ հարմարավետ ռեալիթի շոուի հերթական դրվագը դիտելը, կարծես խստապահանջ կույր պահակները արգելում են մտնել ձեր ինքնամեկուսացման սենյակ, քանի դեռ դուք չեք մշակել բազմաթիվ սրամիտ և բարդ կամ դատարկ գաղափարներ, որոնք հոգնեցնում են ձեր ուղեղը: Ցավոք, դուք Սոկրատեսը չեք, այլ պարզապես մարքեթինգի տասնինը տարեկան ուսանող, ուստի այս վեհ կաթվածահարությունը չի կարող օգնել ձեզ գտնել ձեր ունեցած խնդրի լուծումը: Հուսով եմ, որ դուք կարողացաք պատկերացնել, թե ինչ դժվար իրավիճակում է ինձ երբեմն տանում իմ հետաքրքրասեր, բայց ոչ ամենաարդյունավետ ուղեղը:

Արդեն երկու տարի է, ինչ ես ապրում եմ Մոսկվայի՝ Սառը Ձերդ Գերազանցության հոգնեցուցիչ գրկում, ծնողներիցս հեռու: Մոսկվան հոգնեցուցիչ գործարար է, նա իմ կյանքի տեմպը արագացրել է՝ համահունչ մնալով մայրաքաղաքի պահանջներին, հավասարակշռելով համալսարանում ուսումը, աշխատանքն ու անձնական կյանքը: Իմ բախտը բերել է. մարդիկ, ովքեր ընդգրկված են իմ կյանքում, աջակցող և տեղեկացված են, ուստի ես զգում եմ, որ աստիճանաբար աճում եմ: Մեծանալով՝ չէի կարող չնկատել շուրջս կատարվող անարդարությունները: Շատ փոքր տարիքից, ունենալով քվիր և երկրորդ սերնդի ներգաղթյալի փորձառություններ, ես պայքարում եմ աշխարհի կողմից առաջադրված տարբեր հերկուլեսյան փորձությունների դեմ: Այս անձնական փորձառությունը, ի ուրախություն ինձ, ձևավորեցին արժեքների համահունչ համակարգ, և անկախ կյանքը պարզապես լավ կարգավորեց իմ քաղաքական օպտիկան:
Այսպիսով, հուլիսի կեսն է: Որոշ մարդիկ վերլուծում են COVID-19-ի մասին ցրված զեկույցները՝ ինչ-որ կերպ կառուցելու իրենց ամառային ճամփորդությունները, բայց ես մնում եմ շոգ քաղաքում՝ պատրաստելով ոչ շոշափելի նյութեր նոր բարոյական դատարանի համար, որը պատրաստվում էր տիրել իմ հոգին: Վերջին շաբաթվա ընթացքում ես հետևում էի քաղաքական սկանդալներին: Բոլոր վերնագրերում գրվում էր միայն Սահմանադրության փոփոխությունների մասին:

Նրանց համար, ովքեր չգիտեն ինչի մասին է խոսքը նշեմ, որ այս փոփոխություններով փոխվում էին հոդվածների մոտ 60%-ը, հատկապես իշխանության վերաբաշխման հետ կապված կետերը, չեղյալ համարելով նախագահների կողմից ծառայած նախկին ժամկետները՝ թույլ տալով Պուտինին նորից ու նորից առաջադրվել: Ընտրողների ուշադրությունն այս կարևոր փոփոխություններից շեղելու համար նրանք ավելացրել էին պոպուլիստական կետեր. հին ֆավորիտներ, ինչպես օրինակ՝ ամուսնությունը որպես «տղամարդու և կնոջ միություն» սահմանելը: Անտեսելով ակնհայտ վնասակար և զուտ անիմաստ կետերը, եկեք մի պահ կենտրոնանանք այս փոփոխությունների կենտրոնական զոհի՝ ԼԳԲՏԻՔԱՊ+ համայնքի վրա: Ես սարսափ էի զգում՝ լինելով այս առաջարկվող փոփոխությունների անմիջական թիրախը: Սարսափելի էր, գրեթե անհնար է պատկերացնել, թե դա ուր կհանգեցնի, երբ փոփոխություններն ուժի մեջ մտնեն: Լինելով իրատես՝ ես ցավալիորեն տեղյակ էի, որ ես քվեարկությամբ ոչինչ չեմ կարող փոխել՝ խորը փտածության պատճառով, որը կոռումպացնում է ամբողջ համակարգը, ուստի փորձեցի բարձրաձայնել դրա մասին թե՛ առցանց, թե՛ անձնական հաղորդակցության մեջ և իրազեկել մեր խնդիրների մասին, բայց իմ մեջ ինչ-որ բան ավելի կոշտ գործողություններ էր պահանջում:

Մտածում էի ժամանակակից Ռուսաստանի համար ավանդական դարձած բողոքի ակցիա անել՝ սոլո պիկետ: Դա հանրային բողոքի ձև է, որն իրականացվում է մեկ մասնակցի կողմից և չի պահանջում իշխանությունների նախնական համաձայնությունը: Ցուցարարը հաճախ դուրս է գալիս իր հայտարարության ցուցանակով կամ այլ խորհրդանիշներով: Ինձ մոտիվացիա եղավ այդ լուրերը տարածել անտարբեր մարդկանց շրջանում, որոնց սպառնում էր ոստիկանական պետությունը: Ես նաև ամենաքիչն էի ուզում շփվել ոստիկանների հետ, քանի որ նրանք լավագույն համբավը չունեն, բայց ի՞նչ կարող է անել խղճի ծղրիդը համառ ձայնի դեմ:
Նման մտքերն ու զաղափարները լցվում էին իմ գլուխը վերջին շաբաթվա ընթացքում, և նույնիսկ հիմա, ընկերոջս հետ քաղաքում ամառային հիասքանչ զբոսանքի ժամանակ: Ես հիշում եմ, թե ինչպես էի բացատրում իմ ծրագրերը ընկերոջս: Դա հեշտ գործ չէր, քանի որ մենք հաճախ տարբեր կարծիքներ էինք ունենում կարևոր թեմաների շուրջ: Նրա համոզմունքների շրջանակներում ես հաճախ էի տեսնում կոմֆորմիզմ, ինչով նա նման է մեր միլիոնավոր երևակայական համաքաղաքացիներին: Ես հավատում էի, որ եթե չկարողանամ համոզել մտերիմ մարդուն, չեմ կարող որևէ մեկին համոզել կառուցել ավելի լավ հասարակություն:

Ինչպես ասել է մեկը՝ մեծամասնությանը համոզելու համար կարևոր է ցույց տալ ձեր շրջապատի մարդկանց, որ դուք կարող եք տարբերվել և խաղաղ ապրել: Լիովին ոգեշնչված՝ ես ընկերոջս պատմեցի օրվա իմ պլանների մասին, իսկ նա, ինչպես և սպասում էի, փորձեց ինձ մտափոխել՝ ասելով, որ դա անհիմ ու վտանգավոր կլինի իմ ապագայի համար: Բարեբախտաբար այս պատմության համար, ես չէի վախենում իմ կյանքի համար, ուստի փորձեցի բացատրել այս փոփոխությունների վտանգները մեզ երկուսիս համար: Նա արագ հասկացավ, որ չի կարող ինձ համոզել, հրաժարվեց և խոստացավ օգնել ինձ իմ արարքում: Ուրախանալով փոքր հաջողությունից՝ ես նրան առաջնորդեցի մոտակա աղբամանը՝ իմ պաստառի համար ստվարաթուղթ գտնելու: Ոգևորվածությունը լցվեց իմ մեջ, քանի որ ես գտա մի կատարյալ մաքուր կտոր և գրեցի դրա վրա մարկերով՝ առանց առաջին անգամը ձախողելու վախի: Կարգախոսի ճիշտ բառերը ինքնստինքյան մտքիցս դուրս եկան՝ «Ապուշները խլում են մեր իրավունքները»: Ես չէի կարողանում չհիանալ այս հայտարարության պարզությամբ: Դասական դիստոպիայի սյուժեի արտացոլում է, բայց «չար առաջնորդները» առաջնորդվում են ոչ թե գաղափարախոսությամբ կամ խորամանկ ռազմավարությամբ, այլ պարզապես տառապում են խելամտության պակասով: Մինչ ես քայլեցի դեպի պիկետի վայրը՝ Պուշկինի հուշարձանը, ես արդեն լիովին ոգեշնչված էի: Ես արագ գնահատեցի իրավիճակը՝ բազմաթիվ անցորդներ, ինչպես որ ցանկանում էի, և պարեկի երկու աշխատակիցներ, որոնք թափառում էին հրապարակի ծայրում: Ես մի փոքր լարված էի, իսկ ընկերս հեռվից նկարահանում էր, ամեն դեպքում: Ես հակիրճ թարմացրեցի ուղեղումս իրավաբանների հիշեցումները ոստիկանների հետ շփվելու մասին և համոզվեցի, որ ընկերս հեռվից նկարահանում է: Մի պահ տատանվելուց հետո ես վերջապես բարձրացրի պաստառը: Պարեկային ծառայության աշխատակիցները տեսան ինձ և անմիջապես անցան հրապարակը՝ ինձ որոշ ժամանակ տալով իրանց ստուգելու համար: Նրանք երեսուն տարեկան երկու բարձրահասակ, մարզված, սափրված գլխով սլավոնացի տղամարդիկ էին, երկուսն էլ հագել էին միանման ոստիկանական համազգեստ, իսկ դեմքերը թաքցնում էին գործվածքից դիմակներով: Երբ նրանք մոտեցան, նրանցից մեկը դիմեց ինձ.

- Բարի օր հարգելի քաղաքացի, ես հերթապահ Սկվորցովն եմ, խնդրում եմ տրամադրեք ձեր փաստաթղթերը: Ես գիտեի, որ պետք է նրանց ցույց տամ իմ անձնագիրը, քանի որ հակառակ դեպքում նրանք կարող էին ինձ տանել բաժանմունք:

Ես հանեցի անձնագիրս ու զգուշությամբ հանձնեցի նրանց: Մինչ այս երկուսը կարդում էին, ևս երկու սպաներ, ճիշտ այնպես, ինչպես առաջին երկուսը, հայտնվեցին կարծես գետնի տակից: Նրանց միանման համազգեստի, դիմակների և կազմվածքի պատճառով անհնարին դարձավ մեկը մյուսից տարբերելը: Միայն ուսադիրների վրա աստղերի դիրքը կարող էր ինձ ինչ-որ բան ասել, բայց ես երբեք ուժեղ չեմ եղել աստղագուշակության մեջ: Այս անդեմ, ամուր տղամարդիկ միաձուլվեցին իմ հիասթափված մտքում՝ դառնալով մեկ բազմագլուխ ֆրակտալ հերթապահ Սկվորցով: Փոքրիկ ողջույնների փոխանակումից հետո նրանցից մեկն ասաց, որ ինձ կտանեն ոստիկանական բաժանմունք:
«Իսկ կոնկրետ ի՞նչի համար եք ինձ կալանավորում», - ես զարմացած հարցրի: Ես գիտեի օրենքը և դրա գործողությունը համապատասխանեցրեցի իմ խոսքին: Ես գիտեի, որ ոստիկանը չի կարող պարզապես ինչ-որ մեկին բերման ենթարկել՝ առանց պատճառի բացատրության: Ի վերջո՝ ես չէի ուզում այդքան արագ հանձնվել և որոշեցի չշարժվել: Քիչ գիտեի, որ նրանք պարզապես թքած ունեն օրենքի նման ձևականության վրա:

«Եկեք գնանք, մի հապաղեք», - պատասխանեց ոստիկաններից մեկը նյարդայնացած, կարծես ես վատնում էի իրենց ժամանակը հիմար հարցերով, իսկ մյուս երկու առևանգողները կանգնեցին իմ երկու կողմում՝ արմունկներս ավելի հեռու քաշելով հուշարձանից և գնացինք: Զարմանալի է, թե որքան քիչ ուժ պահանջվեց ինձ ապշեցնելու համար: Երբ մենք քայլում էինք հրապարակով և այգով, ես չէի կարող չհիշել իմ առաջին շփումը ոստիկանների հետ, երբ ես ավարտում էի միջնակարգ դպրոցը և դա նշում էի դասընկերների հետ, ովքեր հանձնում էին քննություններից մեկը: Մենք հավաքվել էինք դրսում, մի քիչ գարեջուր խմել և ծիծաղում էինք, մինչ երկու ոստիկան հայտնվեցին մեր խնջույքի մեջ: Նրանք ազնվորեն բաց թողեցին բոլոր աղջիկներին և ինձ ու մեկ այլ տղայի տարան բաժանմունք: Հիշում եմ՝ փորձում էի համոզել մեզ գերի վերցնողներին, որ մեզ էլ բաց թողնեն՝ համոզելով նրանց, որ տուգանքի համակարգը անարդյունավետ է, բայց նրանք պարզապես ծիծաղում էին, ծաղրելով՝ մեզ այն ժամանակ հումանիտար գիտությունների ուսանողներ էին անվանում: Հիշում եմ, թե ինչպես էին բացահայտորեն մեկնաբանում մեր արտաքինն ու սեքսուալությունը՝ մեզ քույրիկ անվանելով:

Նրանք տուգանք նշանակեցին և վերցրեցին մեր լուսանկարները ու մատնահետքերը, իբր մենք հանցագործ ենք, և նույնիսկ սպառնացին, որ կկալանավորեն, եթե հակադարձենք: Այդ օրվա հիշողությունները դեռ թարմ էին իմ մեջ, ուստի ամենաքիչն էի ուզում նորից անցնել այս հոգնեցուցիչ ընթացքը՝ հանուն հին ժամանակների: Բայց իմ ուղեկցորդը շարունակում էր ինձ առաջ տանել: Նրանք ինձ տարան հուշարձանից հարյուր մետր հեռավորության վրա, և ես տեսա երեք մեծ ոստիկանական ֆուրգոններ, որոնք կոչվում են «ավտոզակ», և բազմաթիվ ոստիկաններ, որոնք թաքնված էին մեքենայի մեջ և սպասում էին ինձ նման մեկ այլ խեղճ, հուսով եմ՝ ոչ մեռած հոգու: Նրանցից մեկը կանգնեց, որ ինձ նկարի պաստառի հետ, և ես, չգիտես ինչու, քարացա, կարծես կեցվածք ընդունելով ավելի լավ կադրի համար: Կարճ ժամանակ անց ինձ ձեռնաշղթաներ հագցրին, արագ փակեցին ֆուրգոնում և տարան կայարան՝ գեղատեսիլ մայրամուտով լուսավորված քաղաքով: Ճանապարհները դատարկ էին, բանտի շանսոն էր հնչում ստերեոից, և ես միակ ուղևորն էի այս տարօրինակ ճաղավանդակներով տաքսիում:

Ոստիկանական բաժանմունքը տգեղ, անկյունային տարածք էր՝ բետոնե ցանկապատերով, փշալարերով, դոմոֆոններով, երկաթյա ճաղավանդակներով, անցակետերով ու վանդակաճաղերով: Բարեբախտաբար, ժամանելուց հետո ամեն ինչ ինձ համար կտրուկ չզարգացավ: Կամ իրավապաշտպանների խորհուրդները օգնեցին ինձ չմեղադրել ինքս ինձ, կամ ոստիկանները որոշեցին, որ վերջացրել են ինձ հետ՝ զրոյացնելով ապագա բողոքի ցույցերի ցանկացած ցանկություն: Ոչ ոք չգիտի: Ժամերով արձանագրություններ, ցուցմունքներ, բացատրություններ, և ես ազատ արձակվեցի: Ընդամենը առգրավել են իրավախախտման գործիքը՝ վտանգավոր կարգախոսով ստվարաթուղթը:
Այս պատմության շատ մանրամասներ անհանգստության կամ ժամանակի պատճառով կանհետանային իմ հիշողությունից, եթե այդ օրվա ուղիղ հեռարձակման ձայնագրությունը գտնեը չօգներ ինձ լրացնել բացերը և գրել այս պատմությունը: Ես կարողացա տեսնել տեսարաններ և մանրամասներ, որոնց ինքս չէի կարող ականատես լինել: Օրինակ, երբ ինձ քշում էին անհայտ ուղղությամբ, ընկերս ուշագրավ երկխոսություն է ունեցել ոստիկաններից մեկի հետ:
- Բարև, ընկեր կրտսեր գնդապետ [ի տարբերություն ինձ, նա գիտեր կարդալ այդ աստղերն ու տողերը:] Ո՞ւր է գնում այս ֆուրգոնը կալանավորի հետ:
- Մոտ ազգականներ ե՞ք:
- Մենք? Օ՛, ես եղբայրն եմ... զարմիկը: — [Իմ ընկերը վարանելով պատասխանել էր:]

Հիմա ինձ չի զարմացնում, որ նա նրբանկատորեն թաքցրել էր մեր հարաբերությունները՝ հաշվի առնելով դաժան կոնտեքստը, բայց դա նորից ստիպում է ինձ մտածել ամբողջ աշխարհում քվիր մարդկանց անտեսանելիության մասին: Համակարգի համար մենք՝ քվիր մարդիկ, գոյություն չունենք: Եթե մեզանից որևէ մեկը հայտնվում է նման ծանր վիճակում, մենք ստիպված ենք ստել և հորինել: Մենք արագ ընտելանում ենք դրան, իսկ հետո հեշտությամբ փակում ենք մեր սնդուկների դռները աշխատավայրում, ուսման ժամանակ, ընտանեկան հավաքույթների ժամանակ: Ես հանդարտ վշտով եմ լցված այս անտեսանելիության պարտադրված թիկնոցի նկատմամբ, որը կախված է մեզ վրա պետությունների, հասարակությունների, նույնիսկ ինքներս մեր կողմից: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի մեզ զգանք ինչպես կանք ապահով տարածքների միրաժներից դուրս նույնպես: Ի՞նչ կլիներ, եթե այն ժամանակ իմ ընկերն այդ ոստիկանին ասեր, որ մենք զույգ ենք: Արդյո՞ք նրան նույնպես կալանավորելու էին: Արդյո՞ք ես ավելի շատ խնդիրներ կունենայի ոստիկանական բաժանմունքում: Ինչպես մեկն ասել է, մեծամասնությանը համոզելու համար կարևոր է ցույց տալ ձեր շրջապատի մարդկանց, որ դուք կարող եք տարբերվել և խաղաղ ապրել, և ոչ ոք չի խփի ձեր դեմքին:

Եվ, բարեբախտաբար, ոչ ոք չխփեց: Երկրում մարդու իրավունքների հետ կապված ներկայիս իրավիճակը, իմ պատմությունը վերջնականացնում է, այն, ինչ այն ժամանակ անկանխատեսելի էր, հիմա մեզանից շատերի համար պարզ է, սա տարբեր ազատությունների դեմ համակարգված, ավելի փոքր հարձակումների արդյունք է: Սկսած խտրական օրենքներից, քաղաքական սպանություններից և ոստիկանական բռնություններից մինչև պոպուլիստական պատերազմներ, այն ամենից, ինչից մենք վախենում ենք, քանի որ ժամանակակից մարդիկ ամեն տեղ են ամեն վայրկյան: Բոլոր խնդիրները, որոնք ես պատրաստ էի վեր հանել, այժմ թռչում են օդում, և դրանք շատ վարակիչ են, մի ուրվական իսկապես շրջում է աշխարհում:
Արդեն մեկ տարի է, ինչ ստիպված էի փախչել իմ առաջին տնից և տեղափոխվել իմ պապենական տուն՝ Հայաստան: Հայքի երկիրը, որ երբեմն ավելի շատ նման է ատելության երկրին, իմ համայնքի համար նույնպես ամենաբարյացակամ վայրը չէ: Այստեղ քվիր մարդկանց կյանքը լի է տարբեր վտանգներով՝ աշխատանքում, ընտանիքում, պաշտոնյաների հետ խնդիրներից մինչև կենդանի սպառնալիքներ և փողոցային բռնություններ: Լիովին գիտակցելով, որ կամ զառանցանքի մեջ եմ, կամ բավական զայրացած եմ, որ ուղղեմ բոլորովին

անծանոթ մարդկանց ինձ սխալ դերանուններով դիմելը, կամ դիմահարդարվեմ հանրության առաջ, թեև ինձ նման մորուքավոր մարդկանց այդպես չեն ընդունում: Ես ստիպված էի մի երկու անգամ կռվել այստեղ, անթիվ բանավոր վեճեր ունենալ, և երբ զգացի ահաբեկչությունը, հիշեցի, թե ով եմ ես և ինչի համար եմ հանդես գալիս: Վերջերս այստեղ նույնիսկ ոստիկանության անցանկալի ուշադրության հետ կապված իրավիճակի մեջ հայտնվեցի: Ես կանգնած էի մի նոր հանրահավաքում՝ այստեղ՝ Երևանում՝ ծիածանի դրոշով փաթաթված, երբ պարեկային ծառայության աշխատակիցը սկսեց վիրավորել ինձ և նյարդայնացած հարցնել, թե ինչու եմ այն կրում: Ես հրեցի նրա ձեռքը և պատասխանեցի, որ դա իր գործը չէ: Ես չեմ ուզում, որ փոքրիկ ստերն ու հիմարները նորից խլեն իմ իրավունքները: Թեև ամեն անգամ ավելի ու ավելի դժվար է դառնում ուժեղ մնալը, ես փորձում եմ ինքս ինձ հիշեցնել, որ սերը հաղթում է, և կյանքը կարող է ավելի լավը դառնալ:

Քաղաքագետներից մեկն ասել է, որ մեծամասնությանը համոզելու համար կարևոր է ցույց տալ ձեր շրջապատի մարդկանց, որ դուք կարող եք տարբերվել և խաղաղ ապրել, և ոչ ոք չի խփի ձեր դեմքին, և եթե նույնիսկ դա անեն, վերջիվերջո, կան ավելի կարևոր բաներ, քան մեկի դեմքը:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Էգի Էֆես

Սկիզբը

Հնչեց զարթուցիչը. վաղ առավոտ էր, սառը ձմռան թույլ արևը իր մեղմ շողերով լուսավորում էր քնած հերոսի ոսկե գանգուրները: Նա ամբողջ ուժերով փորձում էր արթնանալ: Այդ օրը շատ կարևոր էր, նա պլանավորել էր ամբողջ օրը անցկացնել իր ընկերների հետ՝ զբոսնել և շրջել վաղուց մոռացված փողոցներով: Անցավ մի ակնթարթ, և նա, արդեն կանգնած ոտքի թաթերի վրա, փորձում էր հասնել հայելուն, որպեսզի ուղղեր գանգուրները: Նա նիհար, բավականին բարձրահասակ, նուրբ դիմագծերով և երկար գանգուր մազերով երիտասարդ էր:

«Ափսոս….» մտածեցի ես և շարունակեցի այսքան տհաճ իմ համար գործողությունը … Նորից հնչեց զարթուցիչը, բայց այս անգամ արդեն ժամանակն էր դուրս գալու, երկար և սառը ճանապարհ էր սպասվում ինձ: Ես ծածկեցի բաճկոնով հագածս կանացի հագուստը և արագ դուրս եկա տանից՝ քանի դեռ մայրս չէր նկատել: Ահա և ես անցնում էի փոքրիկ քաղաքի ճնշող փողոցներով, որտեղ ամեն անցորդ իր թշվառ հայացքով այնպես էր ինձ նայում, կարծես ես անընդունելի մեղք էի գործել՝ վառել կամ մորթել, բայց ո՛չ պակաս: Վերջապես ավտոբուսում իմ տեղը գտա և ուղևորվեցի դեպի Երևան:

Այս ամենը շատ ճնշող էր, բայց ես չափազանց շատ էի կարոտել ընկերոջս: Երբ հասա և իջա, առաջինը, ինչ լսեցի, Հիփիի բարձր ձայնն էր: «Էգի՛…» բացականչեց Հիփին, վազելով իմ կողմը, որ գրկի, բայց պատահական հարվածեց կրունկով իմ ոտքին, և մենք միասին գրկախառնվեցինք ասֆալտի հետ: Ցավոտ և ծիծաղելի էր միաժամանակ, չգիտեի լաց լինեի, թե ճչայի: Ծիծաղելով և լացելով՝ կանգնեցինք և սկսեցինք զբոսնել՝ լվանալով մեր չսիրելի ծանոթներից մեկի ոսկորները: Մի քանի ժամ անց մենք հրաժեշտ տվեցինք միմյանց և գնացինք մեր ուղիներով: Ես, իմ պլանների համաձայն, հանդիպեցի ընկերոջս: Նա այնքան ուժեղ գրկեց ինձ, որ քիչ էր մնում խեղդվեի: Քանի որ դեռ շատ շուտ էր մինչև միջոցառման սկիզբը, մենք նստեցինք և սկսեցինք զրուցել, ավելի ճիշտ, նա նստեց, իսկ ես նստեցի նրա գիրկը:
8:40-ին հրապարակում հավաքվել էր մի ամբողջ քաղաք, բոլորը ուրախ քննարկում էին մասնակիցների երգերը և իրենց թեկնածուներին, իսկ ոստիկանները ստուգում էին իրերը՝ հրապարակ թողնելուց առաջ: Երբ հերթը հասավ ինձ, իմ իրերը չստուգեցին և ուղղակի թողեցին անցնեմ, քանի որ մազերս շեկ էին և հայի նման չէի, իսկ իմ ընկերը բավականին թուխ մաշկ ուներ և նրան ստուգեցին՝ ամեն մի գրպանը, ես երկար էի սպասում նրան, երբ վերջապես անցավ, ամուր բռնեց ձեռքիցս և տարավ դեպի տոնածառը:
Ահա և միջոցառումը սկսվեց:

Մասնակիցները հերթով ելույթ ունեցան, ինչից հետո սկսվեց տոնածառի լույսերի վառման արարողությունը: Երբ սկսվեց հրավառությունը, ընկերս հանկարծակի ինձ համբուրեց, սա իմ առաջին համբույրն էր, ինձ թվում էր, թե բոլորը մեզ են նայում, և հիմա մի բան կլինի: Մենք կանգնած էինք տոնածառի դիմաց, բոլորի աչքերի ուշադրության տակ, բայց միակ բանը, որ լսեցի, այն էր, որ երկու աղջիկ գոռացին հետևից՝ «Աստված ինչ սիրուն զույգ է:» Ես չէի մտածում, որ Հայաստանում այսպիսի բան կկարողանայի լսել: Նրանցից մեկը նույնիսկ մոտեցավ մեզ և ասաց, որ ուզում է ծանոթանալ:

Դեպի տուն 21:35 11.12.2023
Ես նստեցի ավտոբուս ընկերոջս հրաժեշտ տալուց հետո, ամեն բան լավ էր թվում: Ես միացրել էի “Another love” երգը և փորձում էի անջատել ուղեղս, բայց չէր ստացվում, ինքս էլ չգիտեմ՝ ինչու արցունքներ էին գլորվում աչքերիցս: Ես տխրեցի և չհասկացա, թե ինչպես քնեցի:

23:22
«Դմմ… Դմմ…» թակում էի դուռը, մի ակնթարթ և ես արդեն տանն եմ, հոգնած, ուրախ օրից հետո կարծես էմոցիոնալ քամված, դրա համար արագ փակվեցի սենյակում:
—Էգի արթնացիր՛ … Էգի՛.
Բղավում էր մայրս՝ համադրելով իրար հետևից վիրավորանքներ և ձեռքերով ինձ քաշքշելով փորձերը: Ես սարսափի մեջ էի՝ մայրս բացել էր հեռախոսս մատնահետքով և գտել այն համբույրի նկարը, կարդացել բոլոր նամակները, իմացել ամեն մի բան, մորս աչքերում կարդում էի զզվանք, նողկանք, կարծես նրա կյանքի խայտառակությունն ու սխալը լինեի: Ես ինքս այսօր ստորագրեցի վճիռս:

Նոր պայմաններ 13.12.2022
Օրը շարունակվեց արդեն կալանքի տակ: Վերցրեցին իմ բանկային քարտը և ամբողջ գումարս: Այրեցին այն իրերս, որոնք իրենց աչքերին «ԳԵՅՈՏ ԹՎԱՑԻՆ», կալանքի հաջորդ պայմանը Եհովայի-վկաների աստվածաշունչ կարդալն ու իմ մեղավոր հոգու համար փրկում խնդրելն էր, որի հետ միաժամանակ ընթանում էին վհուկների արարողությունները, որոնց մեջ մտնում էին աղով լողանալը, ծառի տակ հագուստ թաղել և հետո կրելը: Հիշում եմ՝ ոնց էին ինձ ստիպում 17 անգամ աղոթք կարդալ մոմերի տակ և կաթացնել հալված մոմի ոսկը ձեռքերիս վրա, մայրս հաճախակի իր արյունն էր լցնում ճաշիս մեջ, միակ բանը, որ նրանք ցանկանում էին, դա ինձ փոխելն էր՝ նոր մարդ դարձնելը, ջնջել իմ էությունը, ամեն նոր օր ապրում էի կարծես անհեթեթ երազում: Երբ ես փորձում էի հակառակվել, մայրս սպառնում էր, որ ամեն բան կպատմի հորս և դուրս կշպրտի ինձ:

Փախուստ ու պատիժ 03.01.2023
Նոր տարուց հետո հայրս մեկնեց Բեռլին, սկսվեց իսկական դժոխքը: Ամեն քայլս, խոսքս, շարժումս և ամեն շունչս գտնվում էին մորս դիտարկման տակ: Մայրս գնում էր ընկերներիս տուն, վիճում էր իրենց ծնողների, քոլեջի դասախոսների և այն բոլոր մարդկանց հետ, որոնք ինձ հետ կապ ունեին:

Մի քանի ամիս փակի տակ գտնվելուց հետո ես որոշեցի փորձել ընկերոջս տեսնել, բայց, քանի որ չէի կարող տանից դուրս գալ, ստիպված ստեցի, թե տնօրենն է կանչել քոլեջ և գնացի Երևան: Ես զբոսնում էի ընկերոջս հետ, երբ մայրս զանգեց և ասաց, որ քոլեջում է, բղավելով իմ վրա սպառնաց, որ եթե տուն չգնամ, ինձ համար խնդիրներ կստեղծի և ընկերոջս վերջը կտա: Ընկերս արագ ինձ ուղարկեց տուն մոտակա տաքսիով, թեպետ ես չէի ուզում և վախենում էի: Տանը ես մենակ էի, երբ մայրս եկավ և սկսեց արդեն ավանդական ինձ նվաստացնելու և վիրավորելու գործողությունը, ես նստած լսում և հազիվ էի պահում արցունքներս: Որոշեցի, որ պետք է քնեմ՝ որ օրը շուտ անցնի, բայց այս միտքը շատ սխալ էր:

Ցավ 04.01.2023
Ինչ-որ բան էր կատարվում, մրմռում էր դեմքս, բայց չէի կարողանում արթնանալ, ցավը այնքան ուժեղացավ, որ արթնացա և մութ սենյակից վազեցի լոգասենյակ, վառեցի լույսը , ապշած էի, երբ տեսա կարմրած դեմքս, ինչ որ բան էր դեմքիս քսված: Ես փորձեցի լվանալ դեմքս, բայց մաշկս օճառի հետ պոկվեց և դուրս եկավ, ես բղավում էի և լաց լինում ցավից: Մայրս արթնացավ ձայներից, եկավ և նայելով աչքերիս ասաց.

- Սա կօգնի, որ տղաները քո վրա ուշադրություն չդարձնեն, հիմա չես հասկանա, ոչինչ, բայց մի օր շնորհակալություն կասես ինձ: Ես արագ հագնվեցի և վազեցի հիվանդանոց, պարզվեց, որ նա թույն էր քսել դեմքիս և այրել մաշկս, ընկերս օգնեց ինձ նշանակված դեղերը գնել, որպեսզի դեմքս բուժեմ, այս ամենը շատ երկար էր տևելու:

Հիասթափություն: 12.01.2023
Ես զինկոմիսարիատում անցնում էի գլխավոր ստուգումները, ինձ կանչեցին գեներալի սենյակ, մի քանի հարց տվեցին իմ սեռական կողմնորոշվածության մասին և բացեցին գրքույկը:

- Բալես դու ավելի մեծ խնդիրներ ունես, քան զեյ լինելդ, - ասաց և տվեց ինձ հետազոտությունների արդյունքները, որտեղ գրված էր, որ ես ունեմ գլխուղեղի երկու կիստա՝ բավականին մեծ, և անհրաժեշտ է շտապ բուժում:

- Դու այսպես չես կարող ծառայել, եթե չբուժվես, դժվար երկար ապրես:
Այս խոսքերը ինչ-որ բան փոխեցին իմ մեջ՝ կարծես ջնջվեց ամեն բան, կարծես մահացավ իմ հույսը, ամեն իմաստ: Ես դուրս եկա այնտեղից, փաթաթեցի վառված դեմքս և տհաճ հայացքների միջով քայլեցի դեպի գետի ափ:
- Ալո, ալո, Մա՞տ, - լացելով ես զանգեցի ընկերոջս:
Ուզում էի գոնե մի քիչ ինձ պետքական և սիրված զգալ, բայց նա ասաց, որ չի կարող գալ, իր համար տհաճ էր այդ ճանապարհը, նա չէր ուզում, որ ես անիմաստ իր վրա հույս դնեմ: Նա ասաց, որ ես միայնակ եմ այս աշխարհում: Այդ օրը ես որոշեցի, որ պետք է վերջ դնեմ իմ կյանքին, գեղեցիկ և հանգիստ:

Վերածնունդ 00:00 13.01.2023
Երբ մայրս քնեց, ես գնացի պատշգամբ, միացրեցի երաժշտություն և, ճաղավանդակին հենված, նայում էի ներքևում անցնող մարդկանց, բացեցի գինու շիշը և առաջին անգամ կյանքում փորձեցի խմել, որպեսզի կարողանայի անել մտածվածը, ինձ թվում էր, թե ես մենակ եմ մնացել, կյանքս երկար չէր լինելու, իմաստ չուներ տանջվելու: Ես նստեցի ճաղավանդակին, ոտքերս կախեցի դուրս, հրաժեշտ տվեցի բոլորին և աչքերս փակեցի, որ ցատկեմ:
Ամեն բան կարծես կանգ էր առել, բացի իմ սրտի ձայնից, հանկարծ բացվում է պատշգամբի դուռը, և բղավելով ինչ-որ մեկը փորձում է ինձ հետ քաշել, բայց ես թռա: Նա հասցրեց բռնել շորերիցս և սկսեց հետ քաշել, չնայած որ ես խնդրում էի ինձ բաց թողնել: Նա իմ հարևան Հակոբն էր, ով տեսել էր ինձ և վազել դեպի մեր տուն: Նա բարձրացրեց ինձ, լվաց արցունքոտ դեմքս, ապտակեց բղավելով, որ խելքս գլուխս հավաքեմ, և գնաց: Ես բաղնիքում դեռ երկար գետնին նստած լացում էի: Այդ օրը իմ մեջ ինչ-որ բան փոխվեց՝ ես որոշեցի, որ արդեն մահացել եմ ՝ այսինքն կարող եմ այլևս ոչնչի մասին չզոջալ և ոչնչից չվախենալ:

Ծունչ և թռիչք 05.06.2023
Այս օրը հայրս եկավ Հայաստան, իսկ ես հավաքեցի իմ ճամպրուկները և գնացի տանից: Առավոտ էր, արդեն ամառ, ես նստեցի տաքսի և սկսեցի իմ ճանապարը դեպի նորը, վախենում էի՝ արդյոք ամեն բան կստացվի, հիշում եմ, որ այդ ժամանակ փորձում էի աշխատանք գտնել, որպեսզի ընկերոջս համար բեռ չլինեի, բայց չէր ստացվում, մի օր նա ասաց, թե ես ոչ թե չեմ կարողանում գտնել, այլ ընդամենը ուզում եմ տանը նստել ու իրեն հետևել, սա այնքան ցավոտ և վիրավորական էր իմ համար, որ ես որոշեցի տուն չգնալ մինչև աշխատանք չգտնեմ, մնացի մինչև ուշ գիշեր դրսում, բայց ի վերջո գտա աշխատանք:

Դժվար էր ամեն օր առավոտից մինչ ուշ գիշեր վազվզել, ոտքերս արդեն չէի զգում, բայց ուրախ էի, որ աշխատանք ունեմ: Մի օր ուղղակի սկսեցին վեճեր ընկերոջս հետ, նա կարծես դիտմամբ խմում էր ու գալիս հետս վիճում, այս ամենը բերեց նրան, որ մի օր մենք մի լավ կռվեցինք և ես հավաքեցի իրերս, թողեցի աշխատանքս, բաժանվեցի ընկերոջիցս և գնացի ծնողներիս մոտ, քանի որ նրանք ասում էին, թե ամեն ինչ լավ է լինելու և կընդունեն ինձ: Ավելի սխալ բան դեռ չէի արել կյանքումս: Երկու ամիս անց ծնողներս նորից սկսեցին իրենց ամենօրյա վեճերը և ծեծերը, ինձ նորից արգելվեց դուրս գալ տանից: Երբ նախկինս և մոտ ընկերս իմացան դրա մասին, կապվեցին ծնողներիս հետ և ոստիկանության, ու երկար խոսակցություններից հետո ինձ կարողացան ազատել այնտեղից: Ժամը գիշերվա 4-ին ես մեկ ճամպրուկով դուրս եկա տանից և նստեցի մեքենան: Հաջորդը, ինչը հիշում եմ, այն է, որ ես ընդունվեցի նոր աշխատանքի, հաշտվեցի ընկերոջս հետ և սկսեցի կառուցել իմ կյանքը նորից: Հիմա ես իսկապես լիակատար եմ ինձ զգում, ինձ շրջապատում են սիրելի մարդիկ, սիրելի աշխատանքը, ամեն քայլս լի է փոքր երջանկություններով: Թեպետ իմ պատմությունը շատ խառն և խճճված է, սակայն հետ նայելով ինձ թվում է, որ գլխավոր դասը այն է, որ երբեք պետք չէ կախված լինել մարդկանցից, ժամանակից, հանգամանքներից: Պետք չէ հույսերը կապել ապագայի հետ, պետք է ապրել ներկայով: Մենք միշտ մտածում ենք, թե ամեն ինչ կփոխվի վաղը, բայց վաղը չի գա երբեք, դու ամեն առավոտ արթնանում ես և արդեն այսօր է: Վաղը ուղղակի գոյություն չունի, ուստի հույսը դնելով վաղվա վրա դուք ոչինչ չեք փոխում ձեր կյանքում, պետք է հուսալ հիմա, պետք է սկսել հիմա:

ծածուկ մարդ։
մեղմ ոգու՞ անապա
գուստը հագած՞, ինչը
ժեք ունի Աստծու աչքում։
5 Նախկինում այն սուրբ կա-
նայք, ովքեր իրենց հույսը
Աստծու վրա էին դրել, այդպես
էին զարդարում իրենց անձե-
րը՝ հպատակվելով իրենց ամու-
սիններին, 6 ինչպես Սառան
էր հնազանդվում Աբրահա-
մին՝ նրան «տեր» կոչելով։
Եվ դուք Սառայի դուստրերը
կլինեք, եթե շարունակեք բարին
գործել և չվախենալ ոչ մի բա-
նից, ինչը կարող է սարսափեց-
նել ձեզ։

7 Դուք, ամուսիններ, նույն
ձևով վարվեք՞ նրանց հետ՝
ձգտելով հասկանալ նրանց՝, և
պատիվ տվեք՞ կանանց որպես
ավելի փխրուն անոթի, քանի որ
նրանց հետ դուք էլ եք կյան-
քի պարգևի ժառանգներ՞, այդ
դեպքում ձեր աղոթքների դեմ
արգելքներ չեն լինի՞։

8 Վերջապես, բոլորդ մեկ
մտքի եղեք՝, ցավակից, եղբայ-
րասեր, խորապես կարեկցող։,
խոնարհամիտ՞, 9 չարի փո-
խարեն չարով մի՛ հատուցեք՞,
ոչ էլ չարախոսության փոխա-
րեն՝ չարախոսությամբ՞, ընդ-
հակառակը՝ օրհնեք՞, որովհետև
դուք դեպի այս ուղին եք կանչ-
վել, որպեսզի օրհնություն ժա-
ռանգեք։

10 «Ով ուզում է սիրել կյան-
քը և լավ օրեր տեսնել՝, թող
իր լեզուն հետ պահի՞ չարի-
ցից և շրթները՝ սուտ խոսելուց՞
11 և թող հեռանա չարից՞ ու
բարին գործի, թող խաղաղու-
թյուն փնտրի ու հետամուտ լինի
դրա՞։ 12 որովհետև Եհովա-

դուք
բարին գ
եթե հանուն ա
չարվեք էլ, երջանիկ
կայն մի՛ վախեցեք այն
նից, ինչից նրանք են վախե-
նում՞, ոչ էլ անհանգստացեք՞։
15 Այլ ձեր սրտերում Քրիստո-
սին սրբացրեք՞՝ որպես Տիրոջ,
և միշտ պատրաստ եղեք պա-
տասխան տալու՞ ամեն մարդու,
ով ձեզանից բացատրություն
կպահանջի ձեր մեջ եղած հույ-
սի համար։ Սակայն դա արեք
մեղմությամբ՞ ու խոր հարգան-
քով։

16 Մաքուր խիղճ ունեցեք՝,
որպեսզի ինչ բանում որ ձեր
դեմ խոսում են, ամոթով մը-
նան՝ նրանք, ովքեր արհամար-
հանքով են խոսում ձեր քրիս-
տոնեական լավ վարքի մա-
սին՞, 17 քանի որ ավելի լավ
է չարչարվել բարիք գործելու
համար՞, եթե դա է Աստծու
կամքը, քան թե չարիք գործե-
լով։ 18 Քրիստոսն էլ մեկընդ-
միշտ մահացավ մեղքերի հա-
մար՞՝ արդարը անարդարների
համար՞, որպեսզի ձեզ դեպի
Աստված առաջնորդի՞։ նա, ով
մահվան մատնվեց մարմնով՞,
բայց կենդանացավ՝ ոգով՞։
19 Հետո նա գնաց ու քարո-
զեց բանտում՝ գտնվող ոգիներ-
ին, 20 ովքեր մի ժամանակ
անհնազանդ էին՝, երբ Աստված

Հտն 22:15* Բառացի՝ «թմրադե-
ղեր գործածողները»։

Սյունակ 2
20թ 4:2
20թ 12:32
Ես 30:6
Հվ 20:30
2Թգ 11:4
Գծ 1:8
1Հվ 4:3

Սյունակ 2
Ես 3:22
Ես 34:15
Ես 34:16
Սղ 6:5
Հվ 13:3
Ես 5:12
Գծ 5:41
1Պտ 2:19
Ես 8:12
Ես 10:28
Գծ 1:2
Սղ 4:8
Ես 15:1
1Հվ 6:11
2Հվ 2:25
Տիտ 3:2
Գծ 23:1
Գծ 24:16
1Հվ 1:5
1Հվ 1:19
1Հվ 5:3
Տիտ 2:8
Հտ 12:21
1Պտ 2:12
Ես 2:12
Գծ 1:7
Սղ 1:24
1Պտ 4:12
Գծ 5:9
1Պտ 4:15
Ես 58:6
Գծ 9:28
Ես 5:6
2Գծ 5:18
1Գծ 17:30
Սղ 1:22

ART TRANSMISSIO / concept and design by ispeaktoflowers / photography Elena Gerber.

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՄԻՇԱՅԻ ՀԵՏ

Նարեկ Առուշանյան

Ես հանդիպեցի Միշա Բադասյանին 3 տարի առաջ մերկության և սեքսուալության մասին քննարկման ժամանակ: Մեր սեքսուալության մասին հրապարակայնորեն խոսելը մեր հասարակության մեջ արգելված է, և քչերին է թույլատրվում բացահայտել իրենց սեքսուալությունը: Կարծում եմ, որ Միշայի փորձառությունն ու անցյալը կարող են խոսել շատ երիտասարդների հետ, ովքեր բախվում են նմանատիպ սոցիալական մարտահրավերների, նրանք կարող են առնչվել և առաջացնել նույնականացման և հզորացման զգացում: Նրա փորձը թույլ է տալիս ձեռք բերել ոգևորվածություն, և զգացողություն, որ դու մենակ չես և քո հետ կան մարդիկ:

Հարցազրույցը հարաբերություններ է ստեղծում ժամանակակից առաջադեմ արժեքների և դրանց հակադրությունների հետ: Հիմնարար է, որ մենք բոլորս պայքարում ենք ֆաշիզմի դեմ, բայց հետաքրքիրն այն է, որ այդ պայքարում կարող ենք տեսնել նաև խտրականություն և այլատյացություն: Ես հաճախ եմ կառուցողական բանավեճեր ունենում Միշայի հետ, քանի որ նա աշխատում է այնպիսի հասարակական կազմակերպությունում, ապրում է Եվրոպայում, որը շատերի համար ստեղծում է իդեալական ազատության պատկեր, բայց արդյո՞ք այդպես է:

Միշա Բադասյանը ծագումով Ռուսաստանից հայ կատարողական արտիստ և ակտիվիստ է, ով բնակվում էր Բեռլինում, այժմ Ցյուրիխում: Հաստատապես հավատում է հասարակության վրա արվեստի ազդեցության ուժին և նրա ներդրմանը սոցիալական կառուցվածքների հարցականի տակ դնելով և բարձրաձայնելով մի շարք խնդիրներ:

FUTURE LOVERS / art installation by Mischa Badasyan / photography by Sergey Yengoyan

«Ինչպե՞ս կարող ենք խոսել ազատության մասին, երբ վստահում ենք տիրոջը»:

Նարեկ - Մի փոքր պատմիր քո մասին, քո պատմությունը, ինչպե՞ս հայտնվեցիր ակտիվիզմի մեջ:

Միշա - Վաղ տարիքից ինձ շրջապատող մարդկանց օգնելու ցանկություն էի զգում: Նախ, ես սկսեցի ակտիվ լինել իմ դպրոցում և շրջակայքում: Հետո 14-15 տարեկանում ներգրավվեցի իրավապաշտպան շարժման մեջ, 17-ում դարձա բուսակեր: Ես միշտ ինձ տարբեր էի զգում, և ես ունեի փոփոխող և ստեղծագործող լինելու այս ներքին զգացողությունը: Ես ուզում էի ավելի լավ վայր ստեղծել իմ շուրջը և գտնել մարդկանց և համայնքներ: Նաև 3 տարի է, ինչ կամավոր եմ աշխատում աուտիզմով երեխաների հետ: Ես կապի մեջ եմ եղել մի քանի բարեգործական հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների հետ: Ես իմ համալսարանում սեմինարներ ու դասախոսություններ էի անում, երբ սկսեցի քաղաքագիտություն սովորել: Մենք բազմաթիվ խնդիրներ ունեինք ոստիկանության և FSB-ի (Ռուսաստանի անվտանգության գործակալություն) հետ, քանի որ մասնակցում էինք ցույցերի և բողոքի ցույցերի: Տարբեր կարծիք ունեցողներին Ռուսաստանում երբեք չեն ընդունել: Նրանք մեզ վերահսկում և քրեական պատասխանատվության էին ենթարկում ցանկացած արարքի համար: Ռուսաստանում մեծանալը եղել է հետաքրքիր և վտանգավոր ժամանակներ: 20 տարեկանում ընդունվեցի Գերմանիայում կամավորների փոխանակման ծրագրին և մենակ թողեցի տունս:

- Հոմոֆոբիայի և ձեր իրավունքների ոտնահարման դեպքեր ունեցե՞լ եք:

- «Լուռ» հոմոֆոբիան միշտ առկա էր, երբ դպրոցում կամ համալսարանում կամ տանը միջոցառումների ժամանակ կարող էի կատակներ լսել գեյերի մասին: Սա նաև «լուռ» հոմոֆոբիա է, երբ դու միշտ վախենում ես և չես կարողանում արտահայտվել: Դպրոցում ինձ շատ են վիրավորել, և ես ստիպված էի հետերոսեքսուալ դեր խաղալ: Բայց քանի որ ես Եվրոպայում բացել եմ իմ կողմնորոշումը և հանրային միջոցառումների ժամանակ խոսել եմ բաց, ես նաև հոմոֆոբ հաղորդագրություններ եմ ստացել առցանց սոցիալական ցանցերում և այլն: Հոմոֆոբիայի հետ կապված ֆիզիկական բռնություն ես զգացի Կիևում՝ գեյ-փրայդում և Բեռլինում, երբ ես բռնել էի իմ զուգընկերոջ ձեռքը քաղաքի կենտրոնում: Գեյ-փրայդի ժամանակ ինձ ծեծեցին իմ լավ ընկերոջ հետ 5 նեոնացիստները, իսկ Բեռլինում մի տղա թքեց մեզ վրա գլխավոր հրապարակում, իսկ մեկ այլ տղա բղավեց մեզ վրա, երբ տեսավ, որ մենք համբուրվում ենք:

- Ինչպե՞ս որոշեցիք տեղափոխվել Եվրոպա և այնտեղ աշխատել որպես նկարիչ և ակտիվիստ:

- Թեև ես ուզում էի շատ բան փոխել Ռուսաստանում և իմ հայրենի քաղաքում՝ Դոնի Ռոստովում, աշխարհը բացահայտելու մեծ կարիք ունեի: Դպրոցում ես գերմաներեն էի սովորում (Գերմանիա տեղափոխվելուց հետո ես չէի կարողանում անգլերեն խոսել), ուստի իմ ուշադրության կենտրոնում միայն Գերմանիան էր: Նաև Ռոստովում կամավոր աշխատելու ընթացքում ես հանդիպեցի գերմանացիների և շատ էի լսում Գերմանիայում փոխանակման ծրագրերի մասին: Ես շատ ոգևորված էի դրանով և 2 տարի ծախսեցի ինձ պատրաստելու և ծրագիր փնտրելու վրա: Վերջապես, ինձ հրավիրեցին հարցազրույցի Մոսկվայում և ընդունվեցի ASF (Aktion Sühnezeichen Friedensdienste) ծրագրին և գնացի Դրեզդեն՝ աշխատելու ռասիզմի և աջ ծայրահեղականության դեմ ՀԿ-ում և օգնելու հրեական համայնքի տարեցներին: Մեկ տարի կամավոր աշխատելուց հետո ստացա կրթաթոշակ և սովորեցի սոցիալական աշխատանք:

- Ո՞րքանով եք կարևորում «քամինգ աութը» մարդու իրավունքների կոնտեքստում:

- Դա երկար գործընթաց է: Դա Առաջին տեղում ինքներդ ձեզ համար: Խոսելը գործիք է սեփական ինքնությունը ստեղծելու, ստատուս քվոն ընդունելու համար, ով այժմ դու ես: Երկրորդ, դա շատ ուժեղ ուղերձ է ձեզ շրջապատող մարդկանց և հասարակությանը: «Քամինգ աութից» հետո դուք դառնում եք ձայն, որը բարձրաձայն արձագանքում է և պատմում ձեր պատմությունը: Մեզանից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը, և այդ պատմությունները կազմում են սիրո և ընդունման մեծ ու գեղեցիկ գիրք: Քամինգ աութը հասարակության մեջ ստեղծում է ԼԳԲՏԻՔ անձանց տեսանելիություն, և դա շատ կարևոր է համայնքները կենդանի պահելու համար:
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչն է լավագույնս ազդում Հայաստանում մարդու իրավունքների ծաղկման վրա:

- Հայաստանը դեռ տրանսֆորմացիոն մոդուլում է: Դուք կարող եք տեսնել բազմաթիվ փոփոխություններ և որոշակի առաջընթաց: ՀԿ-ների թիվը տարեցտարի ավելանում է: Մարդիկ ճանապարհորդում են և ապրում արտասահմանում և վերադառնում իրենց փորձառություններով: Առաջ գնալու մյուս կարևոր ասպեկտը Հայաստան եկող մարդկանց հետ փոխանակումն ու համակեցությունն է՝ այդպիսով խառնվելով Հայաստանի հետ: Ամենակարևորը կրթությունն է:
Մենք ձգտում ենք ամեն ինչ ներդնել կրթական ծրագրերում և մանկուց

երիտասարդ սերնդին սովորեցնել մարդու իրավունքների, ժողովրդավարության և ժամանակակից հասարակության մասին:

- Ես գիտեմ, որ դուք աշխատել եք Բեռլինում մի կազմակերպությունում, որն օգնում էր քվիր փախստականներին, կա՞ն պատմություններ, որոնք կցանկանայիք պատմել, օրինակ՝ ներքին հոմոֆոբիայի/տրանսֆոբիայի մասին:

- Բացի նկարիչ ու կենդանիների իրավունքների ակտիվիստ լինելուց, ես պետք է որոշակի գումար վաստակեմ: Իմ հիմնական աշխատանքը սոցիալական աշխատանքն է: Վերջին 9 տարիներին ես աշխատում եմ որպես սոցիալական աշխատող փախստականների հետ: Սովորաբար ես աշխատում էի կացարաններում:

Դրանցից մեկը կացարան էր միայն քվիր/ԼԳԲՏԻՔ փախստականների համար: Ես այնտեղ անցկացրել եմ 3 տարի և աշխատել եմ շատ տարբեր երկրների մարդկանց հետ: Սկզբում ես շատ ուրախ էի լինել այս նախագծի մաս և ուղղակիորեն աջակցել կարիքավոր ԼԳԲՏԻՔ մարդկանց: Բայց շուտով ես հասկացա, որ քվիր համայնքների տարբեր մասերից մարդկանց բերելը միշտ չէ, որ հիանալի է և կարող է հանգեցնել բազմաթիվ կոնֆլիկտների:

Այնքան բռնություն տեսանք միմյանց նկատմամբ այդ վայրում: Ինձ համար իսկապես զարմանալի էր, երբ տրանս կանայք բռնության են ենթարկում մեկ այլ տրանս կնոջ, երբ նույնասեռականներն ընդհանրապես ատում են կանանց և ինչպես են լեսբիները մերժում բոլոր տրանս մարդկանց: Ես ցնցված էի այդ դեպքերի քանակից, և չգիտեի, թե ինչպես արձագանքել և ինչպես արտացոլել այս ամենը: Ես շատ հիասթափված էի և մի փոքր ծանրաբեռնված այս փորձառությունից: Այս ապաստարանը պետք է ապահով տարածք լիներ, և մենք ամեն ինչ արեցինք, որպեսզի մարդիկ իրենց ապահով և սիրված զգան, բայց այն միշտ չստացվեց այնպես, ինչպես մենք էինք ուզում:

Վերջին պատասխանի օրինակը շատ հուսահատեցնող է, այն ստիպում է մեզ վերանայել մեր հարաբերությունները «ուժային» գաղափարների և այն ամենի հետ, ինչին հավատում և վստահում ենք:

Ես վստահ եմ, որ միայն գեղարվեստական պրակտիկաները կարող են ինչ-որ բան փոխել մեր կյանքում և մեր պատմության մեջ: Հարցն այն չէ, որ ինչ-որ բան պետք է փոխել, այլ այն, որ դա պետք է նկատել: Մենք պետք է համախմբվենք, մենք պետք է միասին լինենք, կարողանանք համերաշխության որևէ կետ ունենալ այս ժամանակակից աշխարհում:

ՍԻՐԻՐ ԻՆՁ

Անյա Եգանյան

Ես, թաքնվելով մահճակալի տակ նայում եմ, թե ինչպես է մայրս կռացած գոռում ինձ վրա՝ «դուրս արի»: Նա բղավում էր դա, քանի որ չէր ավարտել ինձ ծեծելը ու նվաստացնելը: Ես փակում եմ աչքերս և պատկերացնում ինձ մեծ, ուժեղ, խելացի, մեկը, ով կարող է հակահարված տալ: Այսօր ես 34 տարեկան եմ: Իմ անունը Անյա է, և ես չեմ կարող պաշտպանել փոքրիկ ինձ, սակայն կարող եմ պատմել քեզ իմ պատմությունը, որպեսզի դու կարողանաս պաշտպանել քեզ և չվախենաս բացվել աշխարհին: Երբ ես առաջին անգամ բացվեցի աշխարհին ես դեռ երեք-չորս տարեկան էի, և հենց այստեղից են գալիս իմ առաջին հիշողությունները: Ինձ դուր էր գալիս խաղալ տիկնիկներով, նայել Մոսկվայի տների մեծ աղյուսներին և համեմատել դրանք թխվածքաբլիթների հետ, իսկ ամռանը ես հիանում էի Վանաձորի սարերով տատիկիս ու պապիկիս տանը: Ես շատ էի սիրում իմ կյանքը, մարդկանց, կենդանիներին: Մինչ օրս ես շատ էմ սիրում կյանքը, մարդկանց ու կենդանիներին: Երբ նայում եմ կատուների աչքերին սիրտս լցվում է երջանկությամբ: Ես նրանց մեջ տեսնում եմ ամենաթանկը՝ ինչ նրանք ունեն - կյանքը: Կյանքի ուրախություն, անկեղծություն, գրեթե մանկական դյուրահավատություն:

Ես էլ նույն չափ վստահում էի աշխարհին, երբ մի օր Վանաձորի մեր բակի տղաները ինձ կանչեցին պարծենալու իրենց արածով ու ցույց տվեցին կենդանության օրոք այրված ու մորթված կատվի դիակը: Նրա աչքերը փակ էին, իսկ դեմքը կարծես դեռ ժպտում էր: Նրանք գլուխ էին գովում, թե ինչպես է դանակը կոտրվել, երբ կտրում էին նրա փորը: Ես նայեցի կատվի դեմքին և ինչ-որ բան մահացավ իմ ներսում: Ես գնացի տուն և երեք օր դուրս չեկա: Փոքրիկ Անյան նստում էր բազմոցի վրա և ոչ մեկի հետ չէր խոսում, չնայած ոչ ոք նրան ոչինչ էլ չէր հարցնում: Այդ ժամանակվանից ես միշտ մոտենում եմ տխուր մարդկանց ու հարցնում. ամեն ինչ լա՞վ է: Նույնիսկ եթե չեմ ճանաչում այդ մարդուն, նույնիսկ եթե մենք վատ հարաբերությունների մեջ ենք: Անձնական դժգոհություններից ավելի կարևոր բան կա՝ կարեկցանքը: Կարեկցանքը, որն ինձ միշտ պակասում էր մանուկ հասակում: Երբ մարդը չէր պաշտպանում մարդուն, այլ լուռ գնում էր մյուս սենյակ՝ տեսնելով, թե ինչպես է մայրը ծեծում երեխային՝ ինձ: Ես միշտ մենակ եմ եղել՝ դեմ առ դեմ անհնարինի հետ: Ես չէի կարող պաշտպանել ինձ, երբ մայրս կիսատ մնացած ապուը լցնում էր գլխիս, փակում ինձ մութ լոգարանում և սպառնում ինձ մանկատուն ուղարկել: Հենց այդ ժամանակ ես սովորեցի հավատալ հրաշքներին: Ես հավատում էի, որ բոլորի մեջ կա լավը, նրանք ուղղակի սխալվում են:

Եվ իմ հավատը փրկեց ինձ: Քսան տարի առաջ, տասնչորս տարեկանում, ես ինքս ինձ ասացի՝ բայց ոչ ոք խոսք չէր էլ տվել, որ հեշտ է լինելու: Ես դուրս էի գալիս մոսկովյան բնակարանից, որտեղ ապրում էի մայրիկիս հետ, դուրս էի գալիս ձյունառատ Ռուսաստան ու գնում տաք դպրոց՝ նորից ու նորից լսելու, թե ինչ զեր եմ: Ես միշտ եղել եմ խոշոր կազմվածքով, և չէի հասկանում ինչու են ինձ ատում, ես չէի հասկանում, որ դա կարող է նախանձ առաջացնել, քանի որ լինելով պանսեքսուալ՝ ես սիրահարվում եմ ոչ թե մարմիններին, այլ հոգիներին: Ինձ համար միշտ անհասկանալի է եղել, թե ինչու նրանք ինձ այդքան չեն սիրում: Բայց ես ինքս ինձ ասում էի, որ այս լավագույներից լավագույն աշխարհում ամեն ինչ լավ է, երբ վերադառնում էի տուն, որը երբեք չեմ ճանաչել, մոր մոտ, ում երբեք չեմ ունեցել: Ճակատագրի հեգնանքով իմ քվիր ընկերները, ովքեր ինձ ավելի շատ ջերմություն ու սեր են տվել, քան որևէ մեկը նախկինում, ասում են, որ ես լավ մայր կլինեի, քանի որ մայրական շատ մեծ էներգիա ունեմ: Ես չգիտեմ, թե որտեղից է դա եկել, բայց գիտեմ, որ երբեմն, տեսնելով իմ սիրելիների տառապանքը, ես մտածում եմ մոր պես՝ իմ փոքրիկ, ինչպե՞ս կարող եմ անել այնպես, որ քո հոգին չցավա: Եվ ես շոյում եմ ընկերոջս մորուքոտ այտերը, ով իմ երկու հասակին է, ով ինձ համար շատ ավելին է, քան ընկերուհի կամ ընկեր:

Նա իմ հայրենիքն է, չնայած նրան, որ ես ծնվել եմ Ռուսաստանում՝ Կրասնոդար քաղաքում: Ծնվելուց շատ առողջ ու մեծ երեխա եմ եղել: Ինձ թվում է՝ ես ծնվել եմ հրաշքներին հավատալու ունակությամբ: Բայց մի օր այդ հավատքն ինձ ձախողեց, երբ կյանքումս առաջին անգամ սիրահարվեցի. առաջին անգամ և անփոխադարձ: Չգիտեմ ինչու, իմ անպետքության գիտակցումը այնքան անտանելի էր ինձ համար, որ ես հրաժարվեցի դրան հավատալ և հավատացի մի բանի, որը գոյություն չուներ: Ես այնքան համառորեն էի սիրում, հավատում և կոտրվում, որ մի օր հոգեկանս ընդունեց ցանկալին որպես իրական, և քիչ էր մնում խելագարվեի: Մի քանի օր անց փորձեցի ինքնասպան լինել: Ինձ տարան հոգեբուժարան, որտեղ ես անցկացրեցի մեկ ամիս: Առաջին երեք օրվա ընթացքում սիրտս ֆիզիկապես ցավում էր, իսկ հետո, երբ սկսեցի աստիճանաբար վերադառնալ իրականություն, սարսափելի ամաչեցի, որ այժմ «հիվանդ» եմ: Իմ ախտորոշումը անձի երկատումն էր: Հետագայում մայրս և տատիկս խստորեն խորհուրդ էին տալիս թաքցնել, որ ես «հիվանդ» եմ, կարծես ամաչում էին ինձանից: Երբեմն մայրս, զայրույթի ժամանակ, ինձ մեղադրում էր, որ մոռացել եմ հաց գնել կամ համաձայն չեմ նրա հետ, քանի որ ես «հիվանդ եմ»:

Սա երկար տարիներ հետք կթողնի իմ առանց այն էլ փլուզված հոգեկանի վրա, սա նաև կհանգեցնի իմ վիճակը չընդունելուն, բժիշկներ գտնելու դժվարություններին և բազմաթիվ հորմոնալ խախտումներին՝ զուգորդված սննդային խանգարման հետ: Ես հրաժարվում էի ինքս ինձնից, ուզում էի այլ մարդ լինել և, ատելով ինձ, նախանձում էի այն մարդկանց, ովքեր ընկերներ ունեն: Երբեմն ես մնում էի անծանոթ մարդկանց տանը, ում լավ չէի ճանաչում, որպեսզի չվերադառնամ տուն՝ մենակության և նման աբյուզիվ դաժան մոր մոտ: Բայց հրաշքների հանդեպ իմ հավատն անսահման էր: Հիշում եմ, ինքս ինձ ասում էի՝ եթե ես հիմա մեռնեմ, իսկ հետո հետաքրքիր լինի ու ես չիմանա՞մ: Եվ այսպես, առանց իմանալու, ես փրկեցի ոչ միայն ինձ, այլ նաև իմ ընկերներին, որոնց այժմ երջանկությամբ օգնում եմ, որոնց ընդունում և սիրում եմ, հիշելով, որ իդեալական մարդիկ չկան: Մարդկանց սիրելը հեշտ չէ, երբեմն անշնորհակալ գործ է, բայց արժե, քանի որ հիմնական հրաշքները ստեղծվում են ողջերի ձեռքերով: Եվ քանի՞ անգամ եմ սիրահարվել ձեռքերին, ձայնին, հայացքին, հոգուն - միայն հին Աստվածները գիտեն: Ես միշտ սիրահարվել եմ էներգիային և անհատականությանը և երբեմն ես չեմ հասկացել, որ պատահական սիրահարվել եմ աղջկա և ոչ թե տղայի:

Այն ժամանակ շրջապատող աշխարհի արգելքները դեռ չափազանց ամուր էին և պատրաստ չէին ընդունել սերն այնպես, ինչպես այն կար՝ ազատ, բազմազան, ծիածանի գույներով: Մինչև 32 տարեկան ես չէի կարողանում հասկանալ, որ ես պանսեքսուալ եմ և սիրահարվում եմ աղջիկներին, ոչ թե այն պատճառով, որ նրանք տղամարդկային էներգիա ունեին, այլ որովհետև ինձ համար առաջնայինը մարդն ու նրա հոգին էին, և ոչ թե մարմինը, որում նա ապրում է:
Ինչպես հաճախ է պատահում, ինձ շրջապատող մարդիկ ինձնից շուտ նկատեցին, որ ես արտասովոր եմ և տարբերվում եմ բոլորից:
Նրանք ինձ հարցրին՝ արդյո՞ք լեսբի եմ: Այն ժամանակ, երբ ես նույնիսկ չէի հասկանում, թե ով եմ, այն ժամանակ, երբ հավատում էի, որ ես պարզապես ally եմ: Եվ ես հերքեցի ինձ: Վախենում էի, որ բացի հիվանդ և տգեղ լինելուց, ինձ չեն ընդունի նաև այս պատճառով: Թերևս հնարավոր է դրա համար ես ստիպեցի ինձ ունենալ իմ առաջին սեռական փորձը տղամարդու հետ: Այո, իհարկե, նա ինձ դուր էր գալիս, բայց ես ինքս ինձ անընդհատ հարցնում էի՝ ի՞նչ կլիներ, եթե չվախենայի դատապարտվելուց: Կքնե՞ի ուկրաինացի Անյայի հետ, որին սիրահարված էի: Թե՞ այն աղջկա, ով գրավել էր ինձ դեռ դպրոցում:

Թե՞ ես կընտրեի նաև այս տղային, ով սեռական ոտնձգության ենթարկեց ինձ և հետո խնդրեց սեքսով զբաղվել նախքան մեկնելը իր ընկերուհու մոտ: Սիրահարվելն իմ ցավն է և կենսական անհրաժեշտությունը: Ես կարող եմ սիրել ում ասես, բայց դեռ երբեք չի եղել որ «ով ասես» փոխհաղարձ սիրի ինձ: Ի՞նչու է այդպես: Անկեղծ ասած՝ չգիտեմ: Ճարունակու՞մ եմ հավատալ, որ սերը կկատարվի ինձ հետ: Ես էլ չգիտեմ: Այս թեմայի շուրջ շատ եմ խոսել հոգեբանների հետ՝ աստիճանաբար յուրացնելով ինձ ու կոտրված հատվածներս: Հասկանալով, որ ես էլ եմ արժանի սիրո, թույլ կողմերս դրսևորումներս վերածեցի տարբերվելու և եզակիության նշանների: Ես անսասան եմ և համառ, գիտեմ, թե ինչպես հասնել իմ ուզածին, ու թեև ինձ չհաջողվեց ծնողներիս և հարազատներիս կողմից լինել ընդունված այնպիսին, ինչպիսին կամ, ես կարողացա լինել սիրված ինքս իմ կողմից և իմ ընկերների: Միգուցե այն պատճառով, որ մեր հայացքներն ու արժեքները համընկնում են, քանի որ այստեղ ոչ ոք ինձ չի դատի ո՛չ խոտ ծխելու, ո՛չ ամուսնությունից առաջ սեռական հարաբերություն ունենալու համար: Ընդունումը բուժում է: Երկար ժամանակ ես խփվել եմ ընտանիքիս կողմից կառուցված «հերքման» պատին, կոտրելով ինքս ինձ և սպառելով իմ մտավոր ուժը՝ փորձելով ապացուցել, որ գլխավորը ոչ թե այն է, թե որքան հաճախ ես ոտքերդ բացում և ում դիմաց, այլ այն, թե որքան ես սիրում: Նրանց համար ես պոռնիկ և թմրամոլ մնացի: Ռուսաստանում ապրող պահպանողական հայ բարեկամներս չէին ուզում ինձ լսել, հասկանալ ու ընդունել: Եվ ճակատագրի հեգնանքով, միայն իմ պատմական հայրենիք՝ Հայաստան տեղափոխվելուց հետո ես կարողացա լսված ու ընդունված դառնալ: Ինձ լսեցին ինձ նման ազատ մարդիկ: Ոչ, ես չեմ ասում, որ մեզ համար հեշտ է միմյանց հետ, բայց մենք ընդունում ենք միմյանց որպես մարդ, հակասական և անկատար: Եվ ընդունելության մեջ հասունանալով, ընտրված ընտանիքում բուժվելով՝ սովորեցինք ընտրել, ընտրել ինքներս մեզ և ընտրելով մեզ՝ ընտրել մեկ ուրիշին: Կամ չընտրել: Մենք ազատ մարդիկ ենք: Եվ միայն ազատության մեջ է մարդը կարողանում աճել, զարգանալ ու դառնալ իր իսկական եսը, իր լավագույն տարբերակը: Եվ ասում են նաև, որ Աստծո ճանապարհները անասելի են և միայն քայլողը կանցնի ճանապարհը: Գլխավորը՝ հավատալ ինքդ քեզ և հրաշքների ուժին, ինչպես մի անգամ ասացի ինքս ինձ 16 տարեկանում, դու անպայման կհաղթես, քանի որ այլ տարբերակ չկա: Ես Անյան եմ, 34 տարեկան, ես լրագրող եմ և ակտիվիստ: Ես ուժեղ եմ, խելացի, և հեշտ ու ճիշտ տարբերակներից կընտրեմ միշտ երկրորդը:

Is There Anybody Out There?

Is there anybody out there?

Ռոք ընդ Ռոլլ
Շին

- Սատանիստ, – գոռաց մի կին:
- Անամոթ, – գոռաց մյուսը:
- Լեսբի, – միացավ երրորդը՝ կյանքս սարքելով աբսուրդի թատրոն:

Ռոքը ականջակալներիցս լցվում էր ավտոբուսի մեջ՝ մարդկանց նեղ ու դեֆորմացված գանգատուփեր, որոշներում չէր տեղավորվում, ինչպես և իրար գլխի ելած, մեկը մյուսի ոտքերը տրորող, անիծող ու անիծվող ուղևորները: Ռոքը կյանքիս ոճն էր, ապստամբությունը հասարակության դեմ, պայքարը հանուն կարծրատիպերի կոտրման, արդարության, հավասարության: Պայքարը հողմաղացների դեմ, ապարդյուն, անիմաստ, կյանքի պես դատարկ, մենամարտ առանց հաղթողների, լոկ պարտվողներով, կորուստներով ու հիասթափություններով լի:

Հասա քոլեջ, հարվածային գործիքների ռիթմի տակ բացեցի դուռը, ասես անհաջող ֆիլմի տեսարան լիներ:

Քայլ առաջ, քայլ հետ: Մի քայլ առաջ, երկու քայլ հետ:

Լսարան, ուսանողներ, անտանելի վայնասուն, որը անգամ խուլ մարդուն կստիպեր կռկվել:

Հայոց պատմություն, ծայրահեղական դասախոս, գենոցիդ, նորից նույն երգը փչացած սկավառակի պես անդադար պտտվող:

- Թշնամու ընտանիք կսպանեի, չէի նայի երեխա թե կին, մի լավ կտանջեի բոլորին, - հիմարի աչքերը հիացմունքից վառվում էին իր իսկ նկարագրած պատկերներից:
- Շատ դաժան էր, չե՞ք կարծում:
- Դու եվրեյ չէի՞ր:
- Հրեա:
- Ջհուդ, դուրս արի լսարանից:
- Ի՞նչ իրավունքով:
- Էն որ ջհուդի ու ռուսի խառնուրդ ես ու հայերի դասին ես նստած:
- Ես հայ եմ:
- Ի՞նչովդ: Անունո՞վդ, թե ազգանունո՞վդ: Կարո՞ղ ա շեկ մազերովդ ու պատի ծեփի պես սպիտակ պեպենոտ մաշկո՞վդ:
- Դուք իրավունք չունեք:
- Ես իմ երկրում ամեն ինչի իրավունք ունեմ ի տարբերություն քեզ, դուրս արի լսարանից, ու լավ կանես երկրիցս էլ: Նա գնաց, ես մնացի, բայց զգում էի, որ մտովի լքեցի սենյակը համակուրսեցուս հետ, ում քիչ առաջ վտարեցին, օտարացած, այդպես էլ հարազատ չդարձած իր հայրենիքից:
Հաստատ ռոք էր լսում:
Դասամիջոց. իրարանցում, անցուդարձ:
Դեպի արևՀ՝ն էին գնում ամբոխները խելագարված...

Ես ցիտում էի Չարենցին՝ հետևելով մարդկային զանգվածներին, ովքեր զինվորական քայլերթով հատում էին միջանցքը: Աջ ձախ, աջ ձախ, ձախ… ձախ… հետ դարձ:

Չծամված ուտելիքը բերանների ներսում հպվում էր կիսածամված խոսքերին: Ես չէի լսում, խուլ ձևացա:

- Հիմա եթե ընկերդ ասեր, որ գեյ ա, ի՞նչ կանեիր:
- Է,՝ էլի սկսի՞ր, դե ինչ անեմ, կարևորը ինձ չկպնի:
- Ո՞նց: Բա չէի՞ր վնասի:
- Կվնասեի:
- Ախպեր, ես հրապարակում փոս կփորեի, կվառեի, կշպրտեի մեջը դրան:
- Հաստատ:
- Կամ կկախեի հրապարակի մեջտեղը, բայց մի լավ ծեծելուց հետո:

Կռկվեցի:
- Դու կենդանի ես,- մեջ մտա անպոչ գդալի պես:
- Ի՞նչ ասիր:
«Խուլը ես էի,՝ թե դու՞:»
- Ասեցի կենդանի ես:
- Չլինի դո՞ւ էլ ես դրանցից:
- Չլինի դո՞ւ էլ:
- Կրկնի:
- Ականջներդ մաքրի մեկ մեկ:
- Աչքիս խառնում ես, հա՞:

Հեռացա:
Հոգնեցի, ձանձրալի կենդանաբանական այգուց, ուր միայն կապիկների վանդակ կար:

«Ես կենդանիների հետ եմ սովորում ժողովուրդ»,- հրապարակել գրառումը:

Հացս կերա:

Զանգ, հաղորդագրություն, սպառնալիք: Վախեցա, վախեցած ռոք լսեցի: «Փոշմանելու ես», «Քեզ շան օրը կգցենք», «Դու մեռար»:

Us and them
And after all we're only ordinary men

Փինք ֆլոյդ, տրոլեյբուս, աղմուկ, խաչակնքվող տատիկ: Խցանում, հայհոյանք, ուշացում, «Դռները բաց իջնեմ, հոպար», «Էս 50-ը փոխանցեք»: Առավոտ, երեքշաբթի, անտրամադիր զզված թարախի կծիկ գլորվող մի ավտոբուսից մյուսը: Կանգառ:

- Սատանիստ:
- Փչացած:
- Լեսբի, ի՞նչ ես խոսացել մեր մասին:
- Ճշմարտությունը:
- Ներողություն խնդրի:
- Կներեք, որ իրերն իրենց անունով եմ կոչում:
- Հեսա հալդ կտենաս:

Միաձայն դիմում տնօրենին, հեռացման կոչ, «Մենք չենք ուզում դրա նմանի հետ սովորենք»:

«Հեռացված ես», սպասում էի այս խոսքերին մի քանի օր շանունակ:

«Դուք իրավունք չունեք» երևակայական երխոսությունն էի շարունակում:

«Ես ամեն ինչի իրավունք ունեմ իմ քոլեջում»:

- Բա գիտե՞ս, որ ինքը կույս չի:
- Լավ է՛:
- Ասում են՝ լեսբի ա:
- Լսել եմ՝ Աստծուն էլ չի հավատում:
- Թուրք չի ուզում սպանի:
- Հորս արև:

Up and Down
And in the end, it's only round and round and round…

- Բարև, գիտեմ որ հետևիցդ խոսում են:
- Բարև, հետո՞:
- Ես էլ եմ ռոք լսում:

Հ. Գ. Չնայած ողջ նեգատիվին, ծանոթացա մոտիկ ընկերոջս հետ, ում գիտեմ արդեն 6 տարուց ավել: Երբեմն խավարը սկսում է քեզ հարազատ համարել:

Հիշողություններ
Հենրի

Չնայած դրսի բքանման եղանակին և ցրտին՝ անմոռաց գեղեցիկ սպիտակ երեկո էր, ձյունը տեղում էր մեծ փաթիլներով: Աննկարագրելի է այն գեղեցիկ սպիտակ շաղարշը, որը իջել էր գիշերային Երևանի վրա: Զարմանալի է, բայց դրսում ցուրտ չէ,
- բացականչեց Նարեկը և Դենի ձեռքից քաշելով դուրս տարավ նրան:
- Իսկապես ցուրտ չէ,- պատասխանելով, Դենին համբուրեց նրա շուրթերը և, գրպանից հանելով ծխախոտի տուփը, մոտեցրեց Նարեկին:
Միգուցե նրանց միևնույն էր ձմեռը, ցուրտը, ձյունը և բքի վերածվող փոթորկանման քամին, քանի որ իրենց ներսում բոցավառվում էր սիրո կրակը կամ ալկոհոլի մեծ քանակությունն էր տաքացնում, բայց նրանք իրենց երջանիկ էին զգում:
Ծխելուց հետո նրանք վերադարձան ներս՝ իրար գրկախառնված, ու սկսեցին կրկին սահել սահադաշտում: Բոլորի հայացքները սևեռված էին նրանց վրա, բոլորը մտածում էին, որ երիտասարդները հայ չեն, քանի որ երկուսն էլ բարձրահասակ,սպիտակամաշկ, ընդգծված դիմագծերով, բաց շականակագույն մազերով, սպորտային կառուցվածքով, օղերով էին և շատ սկանդինավյան տեսք ունեին, սակայն նրանք սահելուն մեկտեղ սկսում են հայերեն բարձր երգել և ստիպել ներկաներին լքել սահադաշտը:
Իսկ սահադաշտի տնօրինությունը և անձնակազմը ուշադիր հետևում էին կատարվողին, քանի որ այնտեղ իրենց և իրենց ծնողներին ճանաչում էին բոլորը: Մյուսներին նյարդայնացնում էր այն փաստը, որ նրանք տարբերվում էին բոլորից և չէին վախենում անել այն, ինչ ցանկանում էին և չէին թաքցնում իրենց զգացմունքները: Դենին և Նարեկը ճակատագրի հեգնանքով ունեն ընտանիքներ, ովքեր նախկինում ապրել են քրեական կյանքով: Երիտասարդներից ոչ մեկը մյուսի ընտանիքի մասին չգիտի, բայց այս երեկոն ճակատագրական անկեղծության երեկոյի է վերածվում Նարեկի ամբիցիոզ «հարբելու» պլանի շնորհիվ: Անկախ այն բանից, որ սահադաշտ ներս բերել ուտելիքներ, առավել ևս ալկոհոլ խստիվ արգելված է, դա Նարեկին չխանգարեց ներս բերել մի քանի շիշ ալկոհոլ և ուտելիքներ, քանի որ նա ըմբոստ և չենթարկվող բնավորություն ուներ և ի ծնե դեմ է գնացել բոլորին՝ ծնողներին, ուսուցիչներին, դասընկերներին, համակարգին, օրենքներին, շատերի պնդմամբ անգամ՝ տիեզերքին: Քանի որ սահադաշտի տնօրինությունը իրենց ճանաչում էր, թույլ տվեցին գիշերը անցկացնել այնտեղ մի պայմանով, որ ոչինչ չկոտրեն: Տնօրենը որոշ չափով հանգիստ էր, քանի որ տարածքը տեսաձայնագրվում էր: Դենին և Նարեկը սկսում են իրենց «ճաշկերույթը»:

Կես գիշերն անց երկուսն էլ արդեն շատ խմած էին, և ուղղակի ի վիճակի չէին անգամ կանգնել, սակայն դա իրենց չխանգարեց, որպեսզի նստարաններից վեր կենան և մտնեն սահադաշտ:
Սահադաշտ մտնելն ու սառույցին ընկնելը մեկ եղավ: Նրանց մնաց մի տարբերակ՝ ուղղակի իրար հետ գրկախառնված պարկել և սկսել խոսել իրենց մանկությունից:
Նարեկին հիշողությունները տարան իր խորը մանկություն:
- Երբ ես երեխա էի, տատիկիս հեռուստացույցով ցույց էին տալիս: Ինքը մանդատը վայր դրած պատգամավորներից էր: Նա հորեղբորս տղաի հետ Ազգային Ժողովի դիմաց մասնակացում էր ցույցերին՝ ի աջակցություն Հայաստանի առաջին նախագահի: Հիշում եմ, այդ ամենի պատճառով ինչ էր կատարվում երկրում. մեզ տեղափոխել էին «ապահով տարածք»: Մայրս իմ ու քրոջս համար Մանկական Աստվածաշուչ էր կարդում: Երբ լսվեցին կրակոցներ, ես վազեցի պատուհանի մոտ ու ականատես եղա մի տեսարանի, որը երբեք չեմ մոռանա՝ զրահապատ մեքենաներ, անգամ տանկեր: Հանրապետության զինված ուժերը, այդ թվում նաև Արցախից ՀՀ տեղափոխված զինվորականներ, պատնեշի նման կանգնած էին ցուցարարների դիմաց և օդ կրակելով փորձում էին ցրել ցույցը, սակայն տեսնելով, որ ցուցարարներին դա չի վախեցնում, զրահապատ մեքենաներով ուղղակի շարժվում են մարդկանց վրա. մայրս այդ պահին ինձ հետ է քաշում և քրոջս հետ տանում այլ սենյակ, որպեսզի ոչ ձայները լսենք, ոչ էլ տեսնենք այդ ամենը: Տատիս վերդառնում է տուն, և մենք նույնպես հետ ենք գնում տուն: Նա այն եզակիներից էր, ում չէին ձերբակալել, քանի որ ուներ ազդեցություն համակարգում: Բայց առավոտյան մեր դուռը թակում են ոստիկանները, նրանց հայրս և հորեղբայրս էին պետք, քանի որ մարդ էին ծեծել և ծանր վնասվածքներ հասցնելով փախուստի էին դիմել. տատիս ստում է, որ տանը չեն և տեղյակ չէ, թե ուր են: Ոստիկանները ուժով ցանկանում են մտնել տուն, բայց տատիս, լինելով «ուժեղ կամքի տեր կին», թույլ չի տալիս, դուռը փակում է ու անմիջապես մտնում է մեր խորդանոց, վերցնում է հինգ կիլոգրամանոց պահածոների երեք տարա և տասներորդ հարկից ուղիղ ոստիկանական մեքենայի վրա է նետում՝ գոռալով՝ ձեզ տղա տվող չկա այ …
Ոստիկանական մեքենան ամբողջությամբ վերածվում է ջարդոնի, ոստիկանները շքամուտքից դուրս են գալիս և այդ տեսարանը տեսնելով ցանկանում են հետ բարձրանալ և ձերբակալել տատիկիս, սակայն մենք ապրում էինք Երևանի ամենաքրեական թաղամասերից մեկում՝ Կռիվոյում: Մեր թաղի նայողները ու մեր ընտանիքին ճանաչողները դանակներով

ու զենքերով ուղղակի ստիպում են ոստիկաններին թողնել իրենց մետաղի ջարդոնը և փախչել: Հայրս հորեղբայրներիս հետ կռիվ էր արել, ինչի պատճառով նրանցից մեկի վրա մի քանի անգամ կրակել էին և նրան տեղափոխել էին հիվանդանոց: Մենք մեկ օր էր, ինչ վերադարձել էինք տուն, բայց ստիպված էինք նորից գնալ. մայրս որոշում է, որ պետք է գնանք իր հորական տուն: Մենք գրեթե մեկ տարի ապրել ենք այնտեղ. դա մանկությանս ամենաերջանիկ ժամանակահատվածներից մեկն էր: Մենք անհոգ ապրում էինք, խաղում էինք և վայելում մեր մանկությունը:
Մեր տեղափոխվելուց մեկ ամիս անց հայրս գալիս է և սկսում է ապրել մեզ հետ: Հայրս որոշ ժամանակ անց ասում է, որ չի ցանկանում այլևս ապրել այնպիսի կյանքով, որ իր կամ իր եղբայրների պատճառով ընտանիքը թաքնված ապրի, վախենա տանից դուրս գալ, չունենանք տուն, ինքը չունենա աշխատանք: Իր այդ որոշումը մեր կյանքը փոխում է 180 աստիճանով. նա ընդունվում է աշխատանքի ճանապարհային ոստիկանությունում, սկսում է զբաղվել ընտանիքով:
Վերադառնում ենք մեր տուն ու կարծես ամեն բան իդեալական է մինչև այն պահը, երբ հորս հարազատ եղբայրները ասում են, որ «իրենց եղբայրը չի կարող ոստիկան լինի». կամ գործից դուրս արի, կամ մեզ մոռացի:
Նա երկար մտածում և կատարում է ճակատագրական սխալ: Նա դուրս է գալիս աշխատանքից: Բայց այս ամենով եթե ավարտվեր՝ ամեն ինչ շատ լավ կլիներ, սակայն հորեղբայրներիցս մեկը շատ մեծ գումարներ էր պարտվել խաղատանը ու հայրս որոշում է վաճառել մեր տունը, որ եղբոր պարտքերը փակի, քանզի սպառնում էին, թե իր ընտանիքին կվնասեն: Մենք տեղափոխվում ենք հորական պապիս տուն, որտեղ ապրում էին նաև իմ երկու հորեղբայրները, որոնցից մեկը արդեն լուրջ խնդիր ուներ, որի անունն է թմրանյութ: Մենք չունեինք այլևս տուն, բայց ունեինք մեքենաներ, որոնք հերթով վաճառվում էին մի հորեղբորս բուժելու կամ մյուսին բանտից ազատելու համար: Մեր տունը Կենտրոն համայնքի «Կռիվո» կոչվող ամենից հանցագործ թաղերից մեկում էր, այստեղ էր ապրել անգամ Սվո Ռաֆը և շատ այլ օրենքով գողեր: Մայրս շատ հանգիստ բնավորություն ունի, երբեք կռիվ չի արել և երբեք ոչ մեկի հետ կոնֆլիկտ չի ունեցել, բայց նա հարևաններին անընդհատ սաստում էր, երբ սկսում էին իրենց քիթը մցնել մեր ընտանիք՝ ասելով «ձեր չկայացած ու մարդկությանը օգուտ չտվող ընտանիքներին նայեք ու քիթներդ հանեք իմ ընտաիքից, թե չէ կկտրվի»:
Կրկին տեղափոխություն. այլ տուն, այլ վայր, այլ միջավայր:
Ես միանգամից սկսում եմ բակի երեխաների հետ ծանոթանալ և ընկերանալ,

այդ ծանոթություններից մեկն էլ դառնում է իմ առաջին հարաբերությունների սկիզբը: Ես քայլում էի գազի խողովակների վրայով և նկատեցի, որ իմ հետևից մի աղջիկ է գալիս և ինձ մեկնում է ձեռքում ամուր բռնած քաղցր ձողիկները ասելով.
- Ես Մերին եմ:
Ես պտտվում եմ նրա կողմ ու քիչ էր մնում ընկնեի խողովակների տակ՝ ջրվեժի նման հոսող շին աղբի վրա և ավարտեի իմ պատմությունը:
Այդ հանդիպումը դառնում է, այն ժամանակ ինձ թվացող, հավերժ սեր, իսկ այդ ժամանակ ես 13 տարեկան էի: Մեր շփումը մինչև հարաբերություններ դառնալը սկսվում էր առավոտյան ժամը 05: 30-ին վազքի դուրս գալուց, իսկ հետո ամբողջ օրը միասին անցկացնելուց, մենք մեկ ամիս անց ծանոթանում ենք միմյանց ընտանիքների հետ:
- Դպրոցում լա՞վ ես սովորել - հարցնում է Դենը Նարեկին: Նարեկն ասում է.
- Դպրոցում շատ լավ էի սովորում, իսկ հայոց եկեղեցու պատմություն առարկան պաշտում էի, բայց այդ առարկան դասավանդող ուսուցչուհու հանդեպ սերը չեմ կարող բառերով նկարագրել, իհարկե այս ամեն ինչը մի օր փոխվեց ուսուցչուհուս կատարած սխալի պատճառով և ես հայտնվեցի տնօրենի մոտ:
Մի օր դասը սկսելուց առաջ ուսուցչուհին դասարանին դիմելով ասում է,
- Մենք մի անգամ երկու նման աղջիկների բուժել ենք և ձեզ էլ կբուժենք-, նա նկատի ուներ ինձ ու այն տղային, ով դառնում է առաջին տղան ում սիրահարվում եմ: Դպրոցում բոլորը մտածում էին, որ ես գեյ եմ ու Էմո: Չէր համապատասխանում մի բան. ես բիսեքսուալ եմ: Ես սկսում եմ վիրավորել ու իրեն նախատել, որ տարբերվող կամ այլ համոզմունքներ ունեցող մարդուն հիվանդ անվանելը ու չակերտավոր «դարձի բերելը» նորմալ չէ՛ և գիրքը նետում եմ ուսուցչուհուս վրա գոռալով.
- Կարող եք չմտածել, ձեր հիվանդ երևակայության համար և հիմարության համար բժիշկները լուծում գտել են, և դրա անունն է «հոգեբուժարան», ես ձեզ կուղեկցեմ այնտեղ և կհետևեմ, որ ձեզ բուժեն:
Մոռացել էի ասել՝ ես դպրոցի «Պատանի Երկրապահ» եմ գրանցվում, որից հետո «ԵԿՄ-ը (Երիտասարդների Կամավորական Միություն)» հանձնում եմ ռազմականի քննությունները և ստանում եմ ԱՎԱԳ-ի կոչում:
Ես մտածում էի, որ ռազմական կրթություն եմ ստանալու և գնալու եմ ծառայության:
Ես արդեն 18 տարեկան էի, երբ ընկերներիցս պատահական իմանում եմ «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի մասին՝ գնում եմ իրենց հանդիպումներից մեկին, որից հետո ինձ որպես կամավոր առաջարկում են մասնակցել իրենց

ճամբարին և, բախտի բերմամաբ, թե պատահմամբ սկսում եմ աշխատել այնտեղ և հանդիպում եմ իմ փրկչին՝ կազմակերպության հոգեբանին: Հոգեբանի շնորհիվ ես սկսում եմ ընտանիքիս կողմից պատճառված վնասներից ազատվել: Ամեն առավոտ աշխատանքի գնալու համար ես կռիվ էի անում տանը, որ ինձ թողնեն դուրս գամ տանից, աշխատանքի գնալս անգամ չէին թողնում, նաև անընդհատ կռիվ էի անում իմ հագուստի համար: Ինձ շատ են ծեծել իմ հագնվելու, իմ տարբերվող լինելու համար: Ինձ հայրս ծեծում էր նրա համար, որ ես սպորտային համազգեստ չէի հագնում, չէի իջնում բակ տղաների հետ անիմաստ ժամանակ անցկացնելու: Հորեղբորս տղան մի անգամ դանակով հարձակվել էր ինձ վրա, որովհետև ճոճղված ջինս էի հագել: Ես իմ ողջ կյանքում կռիվների մեջ եմ եղել, իմ արտաքնի, իմ աշխատանքի, իմ ընկերների և շրջապատի համար: Միայն մայրս էր իմ կողքին լինում:
Որ պարզ լինի, մի պատմություն կպատմեմ:
Ես երեկոյան խանութ էի գնում, փողոցը անցնելուց վարորդը մեծ արագությամբ, հեռախոսը ականջին, կարմիր լույսի տակ ինձ հարվածում ու մի քանի մետր շպրտում է: Ես արյան մեջ թաթախված գնում եմ տուն ու փոխանակ օգնեն հայրս ու հորեղբորս տղան ինձ սկսում են ծեծել, ասելով «խի՞ ես ընգել ավտոյի տակ»: Դենը արդեն քնել էր, իսկ Նարեկը՝ հորանջելով, արցունքները կիսաբաց աչքերին, կարծես, ցանկանում է ավարտել իր պատմությունները և ասում է.
- Իմ կյանքում ես շատ եմ խտրականցվել և բռնության ենթարկվել ընտանիքիս և հարազատներիս կողմից շատ վատ բաներ եմ տեսել և չեմ ցանկանա որևէ մեկը ապրի այն կյանքով, որով ես եմ ապրել: Չգիտեմ շնորհակալ լինեմ ճակատագրին, թե իմ հոգեբանին, որ հիմա ես կարող եմ ազատ խոսել իմ մասին և չվախենալ, որ կխտրականացվեմ. ես իմ մեջ ուժ գտա պայքարելու իմ կյանքի և իմ երազած ապագայի համար, որը հիմա ներկա է:

Առավոտյան տնօրենի ուղեկցությամբ իրենց ծնողները մտնում են ներս և ուղղակի առանց ձայն հանելու կանգնում նայում են իրենց փոքր ինչ կարմրած, մի քիչ էլ մրսած, բայց երջանիկ դեմքի արտահայտությամբ, իրար պինդ գրկած տղաներին: Նրանք այնքան պինդ էին իրար գրկել, ասես վերջին հանդիպում էր և իրենց ստիպողաբար բաժանում էին: Նրանք արթնանում են, կանգնում են իրար ձեռք բռնած, քարանում և իրար ասում՝ Վե՞րջ…



Ամենալավ ընկերներ
Մաքս Գասպարյան

Իմ պատմությունը սկսվում է վաղ մանկությունից: Ես փոքր ժամանակվանից չեմ համապատասխանել Հայ տղա երեխայի կերպարին: Ես չէի սիրում շփվել ուրիշ երեխաների հետ, քանի որ նրանց մտածելակերպը չէր համապատասխանում իմ եսին: Ես չունեի ընկերներ մինչև 18 տարեկան հասակս: 12 տարեկանից արդեն գիտեի իմ կողմնորոշվածության մասին, նաև գիտեի, որ դա սխալ է իմ երկրի համար, քանի որ Հայաստանը ոչ մի կերպ չի ընդունում ԼԳԲՏ+ մարդկանց: Հենց դա էր պատճառը այն բանի, որ ես չունեի ոչ մի տեսակի ընկերներ, ես փորձում էի ինձ պահել, ինչպես հարիր է Հայ տղային, քանի որ վախենում էի այն բանից, որ ինչ-որ մեկը կիմանա ու կասի մայրիկիս, իսկ ես չէի կարող դա թույլ տալ, քանի որ ամենից հարազատ մարդը այս կյանքում իմ մայրն է: Մենք երբեք չենք եղել որպես մայր և որդի, մենք եղել ենք լավ ընկերներ, և եթե մայրս իմանար, որ ես ավանդապաշտ տղա չեմ, նա չէր ընդունի ինձ: Իմ մանկության միակ լուսավոր կետը մայրս էր, և կորցնել նրան կնշանակեր կորցնել կյանքիս միակ իմաստը: Այդ 6 տարին ես ապրել եմ որպես դերասան, երկրիս իրավիճակը իմանալով ես սովորել էի ապրել շատ նախադասություններ գլխիս մեջ պահելով՝ «քեզ տղու պես պահի», «աղջիկների հետ շատ մի շփվի, որ չասեն՝ ղզիկ ես», «մարդկանց հետ շփվելուց ամեն բառիդ հետևի, որ ուրիշ հարցեր չլինի» և այսպիսի տարբեր նախադասություններ, որոնք դաջել էի ուղեղումս: Մայրս միշտ ինձ հետ էր, ու ես երբեք գաղտնիքներ չեմ ունեցել նրանից, նա էլ ինձնից, բայց ամենամեծ գաղտնիքը ինձ ներսից հոշոտում էր ու չէր թողնում հանգիստ ապրել: 18 տարեկանում ես որոշեցի գնալ Ռուսաստան այն հույսով, որ այնտեղ կկարողանամ իմ եսը չթաքցնել: Բայց ավաղ ոչ մի բան չփոխվեց, նույնիսկ ավելի վատացավ: Քանի որ ես ապրում էի մայրիկիս եղբոր տանը, ես ավելի էի լարվում: Չնայած այն բանի, որ այնտեղ մարդիկ կարող էին ինքնարտահայտվել, ես կարող էի միայն նայել և հիանալ նրանցով, իսկ ինքս պետք է խաղայի ավանդապաշտ տղայի կերպարը: Քույրս (քեռուս աղջիկը) գիտեր իմ կողմնորոշվածության մասին, բայց նա նորմալ էր նայում այդ ամենին և խոսք էր տվել ոչ մեկի չասել այդ մասին: Չնայած այն բանի, որ ես կարող էի խոսել քրոջս հետ այդ մասին, ես միևնույն է չէի կարողանում ինձ ազատ զգալ իր հետ, քանի որ նա շատ բաներ չէր հասկանում: Այսպիսով ես հասկացա, որ ինչքան էլ փորձես փախչել ինքդ քեզնից և քո խնդիրներից, միևնույն է ժամանակը միշտ հետ կբերի քեզ քո խնդիրների առաջ և լուծում կպահանջի: Մտածմունքների միջից դուրս գալու համար որոշեցի ուժ գտնել իմ մեջ, և պատմել մայրիկիս, թե ով եմ ես իրականում:

Ես գրեցի նրան, բայց բուն թեմային միանգամից չանցա: Նախ ուզում էի իմանալ, թե ինչ հոգեկան վիճակում է նա գտնվում, որպեսզի ավելի չվատացնեմ իր առողջական վիճակը, քանի որ նա առանց ինձ իրեն շատ մենակ էր զգում Հայաստանում: Մի քանի թեմաներից խոսելուց հետո հասկացա, որ նա իրեն լավ է զգում, և կարելի է անցնել բուն թեմային: Հոգումս դեռ կասկածներ կային, բայց էլ չէի կարող զսպել ինձ: «Մամ, դու գիտես, թե ինչքան շատ եմ քեզ սիրում, ամբողջ կյանքս միայն դու ես ինձ հասկացել ու օգնել, ու ես ուզում եմ ասել, որ ինձ աղջիկներից բացի դուր են գալիս նաև տղաները: Գիտեմ, որ դա սխալ է ու դժվար է հասկանալը, բայց ես ոչ մի բան չեմ կարող անել, որպեսզի փոխվեմ»: Անցավ մեկ րոպե, երկու, երեք՝ պատասխան չկար, շատ վախեցա ու զանգեցի: Լացող ձայնով պատասխանեց, հանգստացա, երբ իմացա, որ նրա հետ ամեն ինչ նորմալ է: Մենք խոսեցինք, ինչ խոսք՝ ես էլ սկսեցի լացել: Մայրս ասաց, որ չգիտի նույնիսկ, թե ինչի համար է լացում, նրա՞ համար՝ որ կարոտել է, թե այն պատճառով, որ ես իր սպասելիքները չեմ կարող արդարացնել: Ես ասացի, որ դեռ չգիտեմ թե ում կընտրեմ վերջում՝ որպես իմ կողակից, և հանգստացրեցի նրան:
Հետո մայրս խոստովանեց, որ զգում էր իմ կողմնորոշվածության մասին:
Նա դա փոքր հասակից էր նկատել ինձ մոտ, երբ ես հագնում էի իր հագուստը, խաղում տիկնիկներով:
Բայց ես անգամ չեմ հիշում այդ բաները և ես հասկացա, որ մայրս կարող էր ինձ արգելել այդ ամենը, սակայն նա ընտրել էր այն ուղին, որտեղ ես երջանիկ եմ ու ժպտերես, ոչ թե հասարակության պահանջները կատարող մարդ: Ես վերադարձա Հայաստան, և ամեն ինչ փոխվեց: Ես այլևս չէի թաքցնում իմ եսը, ճիշտ է գաղտնիքներ դեռ կային ուրիշների համար, բայց ոչ մորս հետ: Այսպիսով, հիմա ես ու մայրս ավելին ենք, քան մայր և որդի, մենք ավելին ենք քան լավ ընկերներ:

ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ ՄԱՄ:

Իմ սկիզբը
Լիլիթ Աթաբեկյան

Ես Լիլիթն եմ, ապրում եմ Լոռվա մարզում, տրանսգենդեր կին եմ ու իմ պատմությունը սկսվում է 14 տարեկանից: Հենց այդ ժամանակ ես կայացած կին դարձա, կայացած տրանս կին:

Ամբողջ ժամանակս անցկացնում էի չորս ընկերուհիներիս հետ, կարելի է ասել նրանց հետ էի ապրում, հաճելի ժամանակներ էին: Նրանց շատ եմ սիրում: Ես ինձ այդ տարիքում գեղեցիկ էի զգում, անգամ առանց շպարի ու կեղծամի, բնական տեսքս ինձ ավելի էր դուր գալիս: Հետո հիշում եմ, թե ինչպես առաջին ընկերոջս հանդիպեցի, սիրահարվեցի, երկար ժամանակ հանդիպում էինք, մեր բոլոր ծանոթները մտածում էին, որ ես աղջիկ եմ: Այդ ժամանակներում նույնիսկ մոտ երկու շաբաթ միասին ենք ապրել: Ես երջանիկ էի զգում ինձ:
Բայց հետո մի բան փոխվեց, ես սկսեցի կանացի կեղծամներ օգտագործել, շպարվել շատ, ավելի արտասովոր հագ ու կապ ունեի, ավելի գեղեցիկ էի ուզում լինել, ավելի կանացի, ու իմ կյանքը աստիճանաբար սկսվեց փոխվել:
Այդ տարիքից էլ սկսեցի աշխատել ու գումար վաստակել, տարբեր մարդկանց հետ շփվել, ծանոթանալ, ժամանակ անցկացնել:

15 տարեկանից գումարի դիմաց հանդիպում էի տարբեր տղամարդկանց հետ, գնում զբոսնում էի քաղաքում, ամեն բան շատ լավ էր, օրս հետաքրքիր էր անցնում, ընկերներով շրջապատված: Ես՝ որպես տրանս կին, ինձ շատ լավ էի զգում Լոռվա մարզում: Բայց հարցը այն էր, որ շուրջ բոլորը կարծում էին, թե ես կին եմ, չգիտեին, որ տրանս եմ, ես էլ չէի ցանկանում, որ իմանան, ինձ միշտ հետաքրքիր էր կին-տղամարդ հարաբերությունները ինչպիսին են լինում, ես էլ ստում էի, թե կին եմ, կամ պարզապես լռում, բայց տարիներ անց սկսվեցին իմ այսպես ասած դաժան օրերը, տանից դուրս գալիս որոշ մարդիկ սկսեցին բացահայտել, որ ես տրանս եմ, սկսեցին ինձ արական անձնանունով դիմել, հետո սկսեցին բռնության ենթարկել: Երբ բոլորը սկսեցին իմանալ, որ ես տրանս եմ, ինձ սկսեցին վատ վերաբերվել, երբ դիմում էի ոստիկանություն այնտեղ էլ էին ծաղրում, վիրավորում անձս, ասում էին՝ ինչի ես դուրս գալիս տանից: Ոստիկանությունը երբեք հետևողական չէր լինում, երբ ինձ նեղացնում էին, իրենց դիմելը անիմաստ էր: Իմ կյանքը շատ վտանգավոր է, ցերեկը լավ է, իսկ գիշերները լինում է՝ դուրս եմ գալիս ու մտածում եմ, որ չեմ վերադառնա, որ սա իմ վերջին օրն է լինելու:

Մի դեպք է եղել Երևանում, գիշերը մոտեցավ մեքենա, հաճախորդ էր, մեքենան նստեցի ու ինձ տարան ինչ-որ տարածք, որին ես ծանոթ չէի, մեքենայի մեջ փորձում էին ինչ-որ դեղեր ներարկել, ես հազիվ դուրս պրծա մեքենայից ու փախա, ստեցի, թե զուգարան եմ ուզում ու վազեցի մեքենայից: Ոստիկանությանը դիմեցի արագ, բայց նրանք ինձ կրկին ծաղրում էին, ես էլ այդ տարիքում դեռ ծանոթ չէի ոչ մի ՀԿ-ի, չգիտեի, որ կարող եմ իրավաբան խնդրել կամ նման բաներ: Միշտ վախենում եմ մարզում քայլելիս, ինձ շատ են հայհոյում, վիրավորում են, ես էլ շատ եմ ընկճվում: Բայց ես ինձ տրանս կարգավիճակում լավ եմ զգում, սիրում եմ շպարվելու ընթացքը, թե ինչպես եմ գեղեցկանում, որ դուրս գամ փողոց: Հիմա ես գիտեմ, որ ոչ մեկ ինձ չի կարող արգելել, որ ես այսպես կամ այնպես դուրս գամ կամ հարցնի, թե ինչու եմ դուրս եկել, որովհետև ես արդեն գիտեմ իմ իրավունքները: Ես կարող եմ իմ գիտելիքներով պաշտպանել ինքս ինձ, իրավաբանորեն տեղյակ եմ ամեն բանից, ես ամենը սովորել եմ ու հասկանում եմ, որ կարող եմ ինձ պաշտպանել, էլ ոչինչ չեն կարող անել, ես օրենքներով եմ շարժվում: Վանաձորը քրեական քաղաք է, իսկ իմ թաղամասը ամենից վտանգավորներից, բայց ինձ արդեն գիտեն, որ նույնիսկ, երբ նոր մարդ է հայտնվում տարածքում, ինձ են զանգում, հարցնում, ճանաչու՞մ եմ, թե ոչ, ու որ ասում եմ՝ այո, նա համայնքից է, նրան էլ չեն նեղացնում:
Արդեն շատ եմ Լոռվա մարզում ակտիվություն ցուցաբերում, որ ԼԳԲՏ համայնքին ոչինչ չսպառնա, ոչ մեկ չպետք է խտրականության ենթարկվի, բոլորս էլ նույն մարդն ենք, բոլորս էլ հավասար ենք: